

15182

ԵՄԻ ԱՅԱԾ



ԵՐԻՍԱԿԱՆ ՔԻՆԱՍՏԱՆ

ԳՈԴԱ-ԲՈՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՏԱԿԱՆ ՃՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ

1940

ԳՐԱԴԱՏԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՈՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

全世界無產者聯合起來呵！

中
的
美
好


書
寫

32(51)
5 - 43
wr

26 SEP 2006
1 DEC 2009

ԵՐԻ ԱՅԱ

Հերոսական
Զինականը



15 APR 2013

75782



1892

40

Э М И С Я О

ГЕРОИЧЕСКИЙ КИТАЙ

Государственное издательство политической литературы
Ереван • 1940



ԱՐԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

3

3 аպոնական աղբեսխայի գեմ իր անկախության և աղատության համար չինական ժողովրդի մղած հերոսական կոփվը հիացնում և պըռողբեսիլ ու առաջազեմ մարդկությանը։ Այդ կովին մասնակցում է չինական ամբողջ 450-միլիոնանոց ժողովուրդը՝ կանոնավոր բանակը, վոր կոփվներում ամրապնդում է իր մարտունակությունը և հերոսության ու անձնագործության որինակներ ե ցույց տալիս։ բազմաթիվ պարտիվանական ջոկատները, վորոնք առաջ են դալիս ամենուրեք չինական անծայրածիր տերիտորիայի վրա և վորոնք թշնամուն ուժգինն, անսպասելի հարվածներ են հասցնում։ բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան, յերիտասարդությունը, կանայք, ծերերն ու յերեխաները։

Այս գրքույկի մեջ զետեղված համարյա բոլոր ուրիշ-
պերն ու հողվածները հիմնված են փաստական նյութի
վրա, —այն նամակների վրա, վոր ստացել ե հեղինակն ան-
միջականորեն չինացի ընկերներից, և այն թղթակցություն-
ների վրա, վորոնք լույս են տեսել չինական թերթերում,
դիմավորապես «Սինխուաժիբառ»-յում և «ՑղկՓան» («Ազա-
տազրում») ժուռնալում՝ Զինաստանի կոմունիստական կու-
սակցության որգաններում :

ՀԵՂԻՇԱԿ

«ՎՈՍԿԵ ՊԱՐԻՍՊՈՂ ՅԵՎ ՅԵՒՄՑՈՂ, ԼԻՑԼ»



երեք ամիս տևեցին Շանհայի համար մըղ-
վող համառ մարտերը: Յապոնական բա-
նակի թիվը հասնում եր հարյուր հազար
հոգու: Յապոնացիներն ունեցին մեծ թվով տանկեր, հրե-
տանավակներ, յերկու հարյուր ինքնաթիւ: Հոկտեմբերի
25—26-ին թշնամին մոբիլիզացիա արավ իր բոլոր ուժերը՝
հետեւակը, ավելացիան և նախատորմը, գործադրվեցին հեղ-
ձուցիչ գաղեր: Թշնամու ճնշման տակ չինական բանակն
ստիպված եր նահանջել Դաշտն: Յապոնացիներն առաջ խա-
ղացին գեղի Դաշտն—Յանոյան խճուղին, սպառնալով Զա-
պեցում, Յզյաննանում և Մյառիսանում գտնվող չինական
ուժերի թիկունքին: Կենդանի ուժը պահպանելու նպատա-
կով, չինական հրամանատարությունը հրամայեց նահանջել
գեղի պաշտպանության նոր գիծ և ամրանալ Շանհայ-
Ռւսուն գծի վրա:

«8-րդ դիվիզիայի 524-րդ գունդը, —ասված եր հրամա-
նի մեջ, —պետք ե սքողի գլխավոր ուժերի նահանջը»:

Հոկտեմբերի 27-ին վաղ առավոտյան չինական բանակի
դպրակոր ուժերը լիակատար կարգով թողին Շանհայի ար-
վարձանը՝ Զապեցը: 524-րդ գունդը կատարեց իր առաջա-
դրանքը, նա ել կարող եր թողնել Զապեցը: Բայց գնդի
ամբողջ կազմը՝ ուժ հարյուր մարտիկներ, գնդի հրամանա-
տարի ոգնական Սե Յզին-յուանի և գումարտակի հրամա-
նատար Յան Ժույ-Փույի գլխավորությամբ, չեր ցանկա-
նում յեռամսյա դիմադրությունից հետո թշնամուն տալ

սութե յերկիրը: Մյուս կողմից, մարտիկները չեյին կարող հաշտվել այն մտքի հետ, թե իրենք պետք է հեռանան առանց կրվի, կամավոր կերպով զինաթափնեն, վորպեսզե նահանջեն Շանհայի միջազգային սետլմենտի տերիտորիայով:

Դա պատվաբեր չե չինական դինորին, —ասում եյին նրանք: —Թո՞ղի թշնամու վրա թանգ նստի մեր յերկրի տմեն մի թիզը: Կովկենք մինչեւ վերջ:

Սուչժոու-կրիկի հյուսիսային ափին, Զապեյում, Գուանֆուռոդի վրա կանդնած և մի յոթհարկանի շնչք, վորի մեջ են տեղալորպած չորս բանկերի պահեստները: Դա բետոնից և պողպատից շինված մի ամուր կառուցվածք և: Գունդը վորոշեց այլակեղ ամրանալ: Շենքի կտուրի վրա դրին գենիթային թնդանոթներ, գարպաների առաջ շարեցին ավազով լցված պարկեր: Կաղմակերպեցին Համահրդեհային պահանություն, սանիտարական բաժանմունք, դրին լուսարձակներ... Ամեն մի մարտիկի և հրամանատարի կրծքին «Յոյուե-սի» («Վորոշված և մեռնել») մակադրությամբ նշան եր կախված: Զինական բանակի հրամանատարությունը, վորին անհամնդատություն եր պատճառում դնդի վիճակը, միքանի անդամ արդեն հրամայել եր, վոր գունդը նահանջի: Շանհայի միջազգային սետլմենտի անդիմացիներն ել նույնպես խորհուրդ եյին տալիս զուրս դալ շրջապատռմից, բայց գունդը քաղաքալարի կերպով մերժեց այլ խորհուրդը և խնդրեց չինական բարձրագույն հրամանատարությունից միայն մեկ բան՝ վոր նա իրենց մթերք մատակարարի:

Մենք վորոշել ենք կովկել մինչեւ մեր վերջին շունչը, մինչեւ վերջին մարդը, —ասացին ութ հարյուր մարտիկներ:

Գնդի մեծ մասը մնաց բանկերի պահեստների շնչում, փոքրաթիվ խմբեր բռնեցին մոտակա տները: Այդպես առաջացավ յաղոնացիների համար անմատչելի լեզենդար ամրոցը, վորի մասին բանակում չինական առածի խոսքերով ասում եյին՝ «Վոսկե պարիսպ և յեռացող լիճ»:

Յապոնական զորքերը փորձեցին մոտենալ նվիրական չենքին: 800 մարտիկները, խնայելով գնդակները, թույլ

եյին տալիս, վոր նրանք մոտենան, և միայն այն ժամանակ եյին սկսում կիալ մոտից արձակել առանց վրիպելու: Մեքանի տասնյակ դրոհներ հետ մդվեցին: Հոկտեմբերի 28-ի առավոտյան շենքի վրա յերեացին յապոնական ոմբակոծիչները, բայց դրանք քչվեցին վենիթային թնդանոթներով: Յապոնացիները վճռեցին զրոհով վերցնել այդ փոքրիկ ամբոցը: Զինական մարտիկները նրանց վրա դնդացրային կրակ բաց արին: Թշնամիները, մեծ կորուստներ կրելով, անկարդ փախուստի դիմեցին:

Յերեք անդամ հարձակում գործեցին յապոնացիները: Սակայն ամեն անդամ ել նահանջեցին, թողնելով տասնյակ սպանվածներ ու վիրավորներ: Տեսնելով, թե ինչպես են փախչում թշնամու զինվորները, չինական մարտիկները լուսամուտներից գոչում եյին նրանց հետեւից.

— Ե՞յ, ավելի դուռյալ, ընկնելք:

Սուչժոու-կրիկի հարավային ավին կանգնած եյին անդիմական զինվորները և ծիծաղում եյին, տեսնելով այդ տեսարանը:

Այժմ յապոնական զամբողները «ամրոցը» միայն հեռաձիգ թնդանոթներով եյին զնդակոծում: Բայց չինացիները չեյին հեռանում տներից, պատրաստվելով վճռական մարտի: Անդիմական հրամանատարությունը մի անդամ ել վորձեց համագել չինական գնդին, վոր նա նահանջի միջազգային սետլմենտի տերիտորիան: Վճռելով, թե լավ և մեռնել, քան նահանջել, գնդի հրամանատարները և մարտիկները նամակելուածներ ուղարկեցին իրենց հարազատներին և բարեկամներին: Գնդի հրամանատարը և գումարտակի հրամանատարը գնդի անունից Շանհայի հասարակական կաղմակերպություններին նամակ գրեցին, վորի մեջ ասում եյին. «Պաշտպանել յերկիրը և հայրենի հողը—դա մեր պարտքն եւ: Մենք վորոշել ենք թափել մեր արյան վերջին կաթիլը և զամբողներից վարձահատույց լինել: Յեթե մեզ մոտ մնա միայն մեկ դնդակ, մենք այն ժամանակ ել մինչեւ վերջ կովկենք թշնամու դեմ»:

Հոկտեմբերի 29-ին յապոնացիներն արթեն այբեցին ամբոցին մոտակա բոլոր տները: Հարեան փողոցների խաչմե-

բուկից հրետանային ուժեղ կրակ բաց արին։ Այդ գիշեր յապոնացիներն ավելի քան տասն անգամ զբոհեցին ամրոցի վրա, բայց ապարդյուն։

ՀԵՐՈՍ Ա.Դ.ԶԻԿԼ



ապելի հերոսական պաշտպանությունը հայցնում եր չին բնակչությանը։ Շանհայի բնակչիները մթերք ելին գնում և հասցնում քաջերին։ Անդամ փախստականները, իրենց բերնից կտրելով, աշխատում ելին փող խնայել և նվերներ գնել Շանհայի հերոս պաշտպանների համար։ Շանհայում ապրով ոտարերկրացիներն ել ելին հիացել։ Նրանցից միքանիսը հաց և դարձուր ելին գնում քաջերին տալու համար։ Շանհայի առևտրական պալատը գնդի համար ազգային նոր դրոշ պատրաստեց, վորի լայնությունը տասը վոտնաչափ եր։ Բայց համարյա վո՛չ մի հնարավորություն չկար դրոշն «ամրոց» հասցնելու։ Յել ահա առևտրական պալատ ներկայացավ տասներեք տարեկան պիտուհի Յան Գույմինը։

—Յես հանձն եմ առնում դրոշը մարտիկներին հասցնելու, —ասաց նա։

Աղջիկը թագուն, կյանքը վտանդի յենթարկելով, անցավ գետը և դրոշը քաշերին հանձնեց։ Այդ հսկայական դրոշը բարձրացվեց այն չենքի կտուրը, վորը նրանք այնքան արիաբար պաշտպանում ելին։ Շանհայի բնակչիները տեսան, թե ինչպիսի հպատությամբ և ծածանվում ամրոցի վրա փառապանծ դնդին իրենց տված նվերը։ Իրենց ժողովրդի, իրենց բանակի համար ուրախության և հպատության արցունք եր յերկում շատերի աչքերում։

Իրենց ըրջապատող թշնամու դեմ 800 քաջերի մղած այլ

անհավասար հերոսական կրիվը չորս որ տեսեց։ Հինգ հոգի սպանվեց, արդեն տասներեք վիրավոր կար։ Վիրավորոված եր նաև գումարակի հրամանատար Յան Ժույ-Փուն։ Բայց թշնամու բանակն անհամեմատ ավելի կորուստներ եր տվել։

Զինական բանակի բարձրադույն հրամանատարությունը հալանություն տալով զնդի հերոսությանն ու հայրենիքին ցույց արված նվիրվածությանը, բազմիցս հրամայել եր թողնել չենքը։ Գունդը չեր ցանկանում նահանջել։ Գլխավոր շտաբից վերջին հեռախոսային զանդով ասվեց։

—Դուք զեռ հարկավոր կլինեք հայրենիքին։ Մասձեցեք հետագա կոմի մասին։ Պնդում ենք, վոր նահանջեք։

Մարտիկներն ու հրամանատարները ակամայից յենթարկվեցին հրամանատարության կարգադրությանը։

«Կեցցե՛ չինական հանրապետությունը» բացականչություններով նրանք լիակատար կարդապահությամբ թողին Զապեյը և անցան դետը…

Պիոներուհի Յան Գույմինը շարունակում և ակտիվորեն պայքարել յապոնական զավթողների դեմ։ Նա ողնում և աղատելու չին յերեխաններին յապոնական բռնացողների ձեռքից և միջոցներ և հավաքում վախստական յերեխանների համար։

VIII ԲԱՆԱԿԸ ՃԱԿԱԾ Ե ԴՈՒԲՍ ԳԱԼԻՑ



VIII

բանակը ճակատ ուղևորվելու լուրն արագորեն տարածվեց բնակչության մեջ։ Տղամարդիկ, կանայք, ծերունիները և յերիտասարդները, —բոլորը գնում ելին ուղեկցելու։ Փող ելին հավաքում և գնում ելին խոզի, վոչխարի միս, հավ, բաղ, ձու և զանազան բանջարեղեն ՎIII բանա-

կին նվիրելու համար : Շատերը դրուշակներ եյին ուղարկում, դալիս եյին իրենց նվազախմբերով : Սիան քաղաքում հինգ աշակերտուհիներ ասեղնագործեցին մի մեծ կարմիր դրոշակ : Միջինից 80-ամյա մի ծերունի ՎIII բանակի դիվիզիայի շտաբը բերեց յերկու աման դինի, մի գամբյուտը ձու և պատվո տախտակ հետեւալ մակարությամբ՝ «Փողովդական միլիոնների բանակ» : Դիմելով դիվիզիայի հրամանատարին, ծերունին ասաց :

— Մեր բանակի համար յես շատ համեստ նվեր բերեցի : Դուք այստեղ կես տարի մնացիք : Դուք վոչ միայն չեք ծեծում մարդկանց, չեք հայՀոյում, զոռով չեք բանում կուլիներին (բեռնակիր բանվոր — և միք .), չեզուց փող չեք առնում, այլ և ողնում եք մեղ, գյուղացիներին, դաշտային աշխատանք կատարելիս, շաբաթորյակներ եք կազմակերպում : Զեր դիսցիլինան իսկապես վոր հիանալի յե : Յես ապրել եմ 80 տարի, բայց առաջին անգամ եմ տեսնում այնպիսի բանակ, ինչպիսին ձերն ե : Դուք իսկապես վոր ժողովրդի բանակն եք :

Ճակատ մեկնելու որերը ՎIII բանակը տեղական բնակիչներին հրավիրում եր զուգման յերեկոների :

Մեծ հրապարակում ՎIII բանակի գունդը մարտական դորահանելու տվեց : Մարտիկները, հրամանատարները և քաղաքացիները յերդում տվին : Մեկը կարգում եր, մյուսները կրկնում եյին .

«Յապոնական իմպերիալիզմը չինական ժողովրդի մահցությամբին ե : Իմպերիալիստները ձգտում են սարկացնել մեր յերկիրը և վոչնչացնել մեր ազդը, նրանք սպանում են մեր հարազատներին, մերձավորներին, նրանք բռնաբարում են մեր մայրերին, կանաց և քույրերին, հրկիրում են բնակարանները, վոչնչացնում են մեր անտեսությունը, ինվենտարը և անսունը : Հանուն մեր ազդի, մեր յերկիր, մեր հայրենակիցների, հանուն մեր դավակների և թոռների մենք յերդվում ենք մինչեւ վերջը դիմադրել յապոնական զալթողներին :

... Մենք պարտավորվում ենք յենթարկվել Ռազմական Խորհրդի միասնական հրամանատարությանը, իսկստ

դիսցիլինա պահպանել և տուն չլեցագառնալ, մինչև վոր մեր յերկրից չլուղվեն յապոնական զալթողները, մինչեւ վոր ազգի բոլոր դավաճանները բնաջինջ չլինեն յերկրի յերեսից» :

Յերբ ՎIII բանակը կույի յեր դնում, ժողովուբուժը գնաց նրան ճանապարհ զցելու : Մարտիկ ճանապարհ եյին զցում իրենց վորդիներին, յեղացրներին, ամուսիններին, հարազատներին և բարեկամներին :

Նրանք ասում եյին մարտիկներին :

— Տուն մի՛ վերապառնաք, մինչև վոր մեր յերկրից դուրս չքչեք յապոնացիներին :

Թմբուկների և զոնգերի աղմուկի տակ, յերգերի և վողջույնի բացականչությունների տակ, ՎIII բանակը մեկնեց ճակատ : Ժողովուբուժը դեռ յերկար ժամանակ դնում եր սրա հետեւից :

ՎIII բանակի ամբողջ ճանապարհին դյուզերից նրան ընդառաջ եյին գուրս զալիս ու վողջունում...

ՎIII բանակի մարտիկները դնում եյին լիներով, առանց ճանապարհի, և մեկ ել կորցրին կողմնորոշումը : Հեռու զաշտում նրանք մի ծեր գյուղացի նկատեցին, վորը վար եր անում : Միքանի մարտիկներ ուղղվեցին դեպի նա : Գորշ զինվորական հազուստով մարդկանց տեսնելով, ծերունին թողեց զութանը և սկսեց փախչել : Մարտիկները հասկացան . ծերունին վախեցել եր, վոր նրան զորով բնոնակիր կլեցնեն, ինչպես զա հաճախ անում են պատերազմի ժամանակ մյուս զորամասերը, և ձայն տվին նրան .

— Մենք խնդրում ենք միայն ճանապարհ ցույց տալ մեզ :

Լսելով հարավային բարեառը, ծերունին կանգ առավ, ուշադրությամբ նայեց մարտիկներին և վերադարձավ նրանց մոտ : Նա ժամանակով հարցրեց :

— Դուք ՎIII բանակն եք, — և դրական պատասխան ստանալով, շարունակեց :

— Մենք, ամբողջ բնակչությունը, պայմանակիրվել ենք, յերբ վինվոր ենք տեսնում, գյուղում մեկ անդամ և զանդը հնչում, և գյուղի ամբողջ բնակչությունը սարերն ե

դնում յեթե տեսնում ենք VIII բանակը, զանգը միքանի անդամ և հնչում, և մենք դուրս ենք դալիս նրան վողջունելու...

Յերբ VIII բանակը դյուդ է մտնում, անդամ կանայք առանց վորուել վախի փողոց են դուրս դալիս, և ժողովուրդը շտապում և ողնելու մարտիկներին փոխադրելու ուղմական ավարն ու հանդերձանքը, խնամելու վիրավորներին, նորուելու ճանապարհները։ Ամեն կողմից թեյ ու այլ հյուրասիրություններ են տալիս, շատերը սիրով իրենց ծառայություններն են առաջարկում վորանս ուղեցույցներ։

Չինաստանի բոլոր կողմերից անընդհատ հոսանքով նոր մարտիկներ են դալիս ժողովրդական-հեղափոխական VIII բանակը։ Նրանք մեծ դժվարություններ են հաղթահարում, ծանր անցումներ են կատարում, վորակադի միայն VIII բանակն ընկնեն։

XIII բանակի միքանի մարտիկներ, վորոնք վիրավորված եյին ճակատում, առողջանալուց հետո չկարողացան դըմուել իրենց զորամասը և մտան VIII բանակը։

— Մենք դիտենք, վոր VIII բանակը շատ լավ և կովում յապրնացիների դեմ՝ ասում եյին նրանք։

VIII բանակի ներկայացուցչությունն են դալիս ամեն որ միքանի տասնյակ պատանի հայրենասերներ և խնդրում են ընդունել իրենց VIII բանակի շարքերը։ Նրանց պատասխանում են։

— Այժմ բոլոր բանակները հակայալոնական են, նրանց միջև վոչ մի տարբերություն չկա։ Վո՞ր բանակն ուղեք մտեք։

Բայց և այնպես պատանիները համառ պնդում են, վոր իրենց ընդունեն հատկապես VIII բանակում։

Չինական վողջ ժողովուրդը արձադանդեց Զժու Դեյի և Պեն Դե-խուայի այն հեռագրին, թե անհրաժեշտ է ողնել VIII բանակին յապոնական դավթողների դեմ կովելու, վորոնք հեղձուցիչ դաղեր են զորագրում չինական բանակի դեմ։ «Սյնխուաժիբառ» թերթի եջերում ամեն որ հրակակում են այն քաղաքացիների ազգանունները, վորոնք փող են մուծում հակագաղեր դնելու VIII բանակի համար։

Այդ քաղաքացիների շարքում կան բանվորներ, կուլիներ, դյուլացիներ, ծառայողներ, դրողներ, գիտնականներ, ուսուցիչներ, դպրոցականներ... Ժողովրդական-հեղափոխական նվաճել և ամբողջ չինական ժողովրդի սերն ու ամուր վստահությունը...»

VIII բանակի յերեք զորամասներ կանդ առան X դյուդում։

Գյուղն սկզբում նրանց յերկյուղով ընդունեց։ Յերեխաները փախան հրաժանավոր մարդ տեսնելով։ Կանայք թաղ-նըկեցին բանջարանոցներում։ Փողոցներում մնացին միայն ծերունիները։

Մարտիկներից մեկը մոտեցավ ծերունուն ու հարցրեց։

— Զուր կարելի՞ յե խնդրել։

Ծերունին գժկամությամբ ասաց։

— Ահա ջրհորը, ինքներդ ձեզ հյուրասիրեցեք։

Մարտիկը տեսավ, վոր ջրհորը բավական հեռու յե։

— Մի՞թե ձեր տանը ջուր չկա, հարցրեց նա։

Ծերունին մոայլեց, հանեց ծխամործը և ծխելով ասաց։

— Ե՛ս, պուր շատ եք, իսկ ջուրը մեզնում վոսկու տեղ ե։

Մոտեցան ևս միքանի մարտիկներ։ Առաջինն աչքով արավ իր ընկերներին, և նրանք սկսեցին ցածրածայն խոր Հըրդակցել։

Ծերունին ուշադրությամբ հետևում եր խոսակցության և յերբ լսեց «VIII բանակ» խոսքերը, իսկույն վեր կացավ, մոտեցավ մարտիկներին և ասաց։

— Դուք VIII բանակի՞ մարտիկներն եք։ Այն ժամանակ, ինդրեմ, ներս համեցեք, թեյով ել կպատվենք...»

Ծխամործով նշան անելով, նա ձայն տվեց բանջարանոց։

— Հեյ, զուրս յեկեք, մերոնք են յեկել։
Խոտով ծածկած փոսերից մեկը մյուսի հետեւց դուրս յեկան կանայք և, ծերունու հետ կարճ, արագ ֆրազներ փոխանակելով, մտան առւն, կրակ արին և ջուր դրին, վոր յեռա։

Կես ժամից հետո բակում սեղանի վրա շարեցին գալաթներ, դրեցին բլիթ, ձմերուկի և գլումի կորիք:

Մարտիկները սեղան նստեցին ծերունու հետ, իսկ կանայք մի կողմ եին կանգնած: Մարտիկները կանանց եւ հրամիրեցին իրենց հետ թե խմելու: Նրանք կարմրեցին և շփոթեցին: Այս ժամանակ ծերունին նրանց հրամայեց սեղան նստել և ասաց մարտիկներին.

— Ներեցե՞ք մեր կանանց տղիտությունը, դուք ինքներդ գիտեք, թե վորքան են վախենում նրանք զինվորներից, և դառնալով կանանց ասաց գրանք չե՞ վոր մերոնցից են: Յերբ ձեզ ասում եմ, արդեն ճշմարտություն ե, և դուք սկսուք ե լսեք ինձ...

Աստիճանաբար աշխույժ խոսակցություն սկսվեց: Մարտիկներն իմացան, վոր այդ գյուղում քիչ տներ կան և վոր տղամարդկանց մեծ մասը մտել ե պարտիզանական ջոկատը, իսկ կանայք, ծերունիները և պատանիները չդիտեն, թե ինչ անեն այսուհետեւ:

— Պետք ե այսուել մորիլիդացիոն կոմիտե կազմակերպութել, մորոշեցին մարտիկները:

Յերեկոյան բացովթյա միտինդ կազմակերպվեց: Հայլաքվել եյին դյուզի բոլոր տղամարդիկ և կանայք, ծերունիները և յերիտասարդությունը, անդամ հարեւան գյողերից ել եյին յեկել: Նախադահողը բաց արալ միտինդը և հայտարարեց:

— Այժմ խնդրենք հրամանատարության ներկայացուցչին, վոր նա մեզ միքանի խոսք ասի:

Բոլորի հայացքը դարձալ զինվորական զենսուով մի յերիտասարդի վրա: Ժողովուրդը հանդարտովեց: Ուշադրությամբ եյին լսում:

Հրամանատարության ներկայացուցիչը պատմեց այն դազանությունների մասին, վոր անում են յապոնացիներն իրենց դրամած շրջաններում, պատմեց, թե ինչպես նրանք վոչչացնում են խաղաղ բնակչությանը:

— Յաղոնացիներն ուզում են վոչչացնել մեր յերկիրը, մեր ընտանիքները, մեր կյանքը, ասում եր նա: Իր ճառի կերջում նա կոչ արեց կատաղի դիմադրել թշնամուն, վոչ

թե կյանքի, այլ մահում կորիվ մղել իմպերիալիստական բարբարությունը:

— Յես կասեմ ձեղ, թե ինչ պետք ե անել: Յերբ թշնամիները կղան այստեղ, դուք թաղցրեք ձեր հայցը և բրինձը, չողում թաղեցնք ամանեղենն ու իրերը և սարերը բարձրացնեք...

— Զրհուներն եւ թունավորենք, — լալեց ծերունու ձայնը:

Ժողովականները ծախահարեցին:

— Ճի՞շտ ե:

Հրամանատարության ներկայացուցիչը շարունակեց:

— Այս ժամանակ, գալով ձեր տները, թշնամիները չեն կարող ուտեն և խմել, նրանք վոչ վոքի չեն գտնի: Իսկ ունչերը մենք աղմուկ-աղաղակ կրարձրացնենք դյուզի շուրջը: Նրանք չեն խմանա, թե մենք քանի հոգի յենք: Յերես զինված մեծ ուժ և, կմտածեն նրանք: Նրանք ամբողջ գիշերը չեն կարող քննել: Յեթե մենք այսպէս անենք յերկու-յերեք որ, մեր թշնամիները, քաղցած մնալով ու տանջվելով, իրենք կիվախչեն: Իսկ յեթե չփախչեն ել, մեղ համար հեշտ կլինի նրանց վոչնչացնելը:

— Խառը, լալեց, լալեց, աղաղակում եյին ունկնդիր:

28 ները:

ԴՐ Իր ճառի վերջում հրամանատարության ներկայացուցիչը պատմեց, թե ինչպես պետք ե կազմակերպիլել, զինվել, ինչպես պետք ե մասնակցել ուժերի համախմբման ամբողջ աշխատանքին՝ թշնամուն զինված հակահարված տալու համար:

Պարզ զեկուցումը, խոսողի վճռական, բայց սիրալիր տոնը բոլորին վոգեռուց: Զրույցին մասնակցում եյին համար վերջանի թատերական խումբը: Յիշինդից հետո յելույթ վարդած ըստոր գյուղացիները: Միտինդից հետո յելույթ վարդած ըստոր գյուղացիների վաղանությունները, այս սարսափները, վորոնց յենթարկում ե յապոնացիների զալթած շրջանների չին ժողովուրդը, չին յերիտասարդության վճռական դիմացին թրությունը և թշնամու վոչչացումն ամբողջ չինական ժողովրդի միացյալ ուժերով, այս բոլորը տեսարան տեսա-

բանի հետեւից անցնում են հանդիսականների աշքերի առաջ և լավ տպալորվում են նրանց հիշողության մեջ:

Վորտեղ ել վոր դալու լինի VIII բանակը, ամեն տեղ ել նա բնակչության մեջ ազիտացիոն-պրոպագանդիստական և լուսավորական աշխատանք է կատարում, բարձրացնելով ժողովրդի ազդային դիտակցությունը և ամրացնելով յապոնական ազրեսիայի գեմ դեռքին կուլելու նրա վճռականությունը: Նույնիսկ ճակատում, վորքան թույլ են տալիս պայմանները, — VIII բանակն այդպիսի աշխատանք է կատարում:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՐՈՀ ՅԱՆՄԻՆԲԱՌԹԻ ՎՐԱ



Եկ անդամ ժողովրդական-հեղափոխական VIII բանակի N դունդը յեկալ Յանմինբար:

Գնդի հրամանատարն ու նրա ողնականը պառկեցին ըլլրի հետեւում և սկսեցին դիակը շրջակա վայրը: Մարտիկները քողարկվեցին թփերի մեջ, բլուրների ստորոտներում:

Հանկարծ դռաոց լավեց, սկզբում թույլ, ապա ավելի ու ավելի ուժեղ: Մարտիկներն ու հրամանատարներն իրենց ուշադրությունը լարեցին:

Նախ մեկ ինքնաթիւ յերեաց, ապա մյուսը: Մեկ և կեռ ժամում հրամանատարներն ու մարտիկները հաշվեցին 24 ինքնաթիւ, վորոնք մեկ բարձրանում, մեկ իջնում եյին ինչ-վոր մոտիկ վայրում: Այժմ արդեն տարակույս չկար՝ այս-տեղ զավթողների աերողումն է: Թշնամին պատրաստվում եր ողից մահ սիրել հաղարավոր խաղաղ բնակիչների վրա:

— Սպասել մինչեւ յերեկո—շշնջալով՝ հաղորդում են միմյանց մարտիկները պետի հրամանը:

Շուրջը խավար ե: Ամեն ինչ հանդարտ: Յապոնական դորքերի մեկ դումարտակ արդեն Տունայանումն է, իսկ

մյուսը՝ Դայսյանում: Պետք է ինչ դնով ել լինի խանդարել ինտերվենտների ովհական ուժերի դալուն:

Տեղում մնում է միայն մեկ դումարտակ՝ «մահվան դումարտակը»: Այդ դումարտակի մարտիկները հպարտ են այն առաջադրանքով, վոր վիճակիվ ել իրենց: Նրանց հահճարարիվ է հարձակվել հակառակորդի աերողումիվ վրա:

Ուշ դիշեր ե: «Մահվան դումարտակը» դուրս յեկալ ըլլուրների հետեւից: Ամեն մեկը միքանի ձեռքի նմակ վերցնելով, մարտիկները սողացին դետնի վրայով: Վոչ մի, ձայն չի լսվում:

Յերբ մարտիկները, շունչները պահած, հասան աերողումի սահմանին, լովեց սուր սուլոց և հինգ հարյուր մարտիկներ հարթակի յերկու ծայրերից: միաժամանակ առաջան: Նույն այդ վայրկյանին դաշտը վառ լուսավորվեց սրայթող հարյուրավոր նոնակներից: Բոցի, ծխի և փոշու ամպի մեջ, վիճակվորների ճիշերի և տնքոցների մեջ սկսվեց ձեմամարտը:

Կրակի մեջ վոչնչացան թշնամու քսանչորս ինքնաթիւները:

Մարտը մեկ ժամից ավելի տեհեց, վորից հետո յապոնացիներին ոգնություն հասալ տասը զրահապատ մեքենաների սրաշտպանությամբ:

«Մահվան դումարտակը» պատվով կատարեց իր արժանավոր ասահաղթրանքը: Նա վոչնչացրեց գիշատիչների ինքնաթիւնները, վորոնք սպանում եյին հաղարավոր մարդկանց կրանքին: Այժմ կարելի յեր նահանջել: Կովելով հետ քաշվեց դումարտակը: Թշնամին չհամարձակվեց հետապնդել նրան:

ՄԻՆՏՈՈՒԳՈՈՒՑՈՒՄ



Եյլինից մոտ քսանհինդ կիլոմետրի վրա գտնվում են քարածխի հանքերը և Մինտոուգոու ամանը: Ածխահանքերում աշխատում է միքանի հաղար հանքավոր: Բանլորների հա-

մար ավանում կան գիշերելու տներ, ճաշարաններ, միքանի խանութ, վորտեղ ծախվում ե ամեն տեսակ մանրունք, մըրդեր և սիդարներ:

Մի յերելո Մինտուգույի ճանապարհով գնում եր յերեք տղամարդ: Յերբ նրանք հասան ավանին, մարեց վերջին ճրագը—բոլորն արդէն քնած ելին: Յերեք յեկվորները կանդ առան զիշերելու տան առաջ և զգուշությամբ բաղնեցին: Դուռն խալույն եեթ չբացվեց, և տիրուհին վախով նայեց անձանոթներին. այդպիսի ուշ ժամանակ քէիրն են վողոցում լինում: Անժամանակ հյուրերը, չոշափելով իրենց զրագաների սակալաթիվ գոլարները (նրանք իրենց հետ ուրիշ վոչինչ չունեյին, անդամ կապոց), սկսեցին հորդորել տիրուհուն, վոր գլւշերելու տեղ տա նրանց: Վերջապես տիրուհին ներս թողեց յեկվորներին ու գնաց թեյ պատրաստելու:

Անծանոթները միմյանց հետ քիչ ելին խոսում: Նրանք հոգնած սեղան նստեցին, սպասելով թեյին: Տիրուհին, վոր մուշ կապույտ չոր եր հագելու մազերին բամբուկե մեծ քորոց եր խրել, բերեց թեյամանն ու յերեք դավաթ: Յերբ նա թեյ եր լցնում, նրանք թեյամանի վրա սպասակ ներկով արլած նշան նկատեցին: Անծանոթներն իրար նայեցին, և նրանցից մեծը վոտքի կանգնեց ու քաղաքավարի ասաց.

Դուք ներեցեք մեղ, խնդրեմ, մեր ուշ այցելության համար, սակայն բացի ձեղնից հաղիվ թե մեկ ուրիշն ընդուներ մեղ այս ավանում: Ինձ թլում ե, վոր մենք մեղ հարկավոր հասցեյով ենք յեկել, —և նա պայմանական նշանն արակ:

Տիրուհին հասկացավ և ուրախ պատասխանեց.

— Դուք...—նա չվերջացրեց խոսքը:

— Հա՛, հա՛, այո, այնտեղից...—կամացուկ պատասխանեց մեկը, և չորսով ել բարեկամաբար ու վստահությամբ ժպտացին:

Տիրուհին արագ խոհանոց գնաց և շուտով բերեց բրնձի ողի, կանաչի և տրորած բակլա: Յեկվորները ուղեցին վճարել նրան: Նա քիչ զարմացավ և մտածեց. «Տարորինակ ե... չե վոր այժմ «այսպիսի» հյուրերից քչերն են, վոր փող ունեն...»:

Քիչ ծաղկատար մարդը, վոր նստած եր սեղանի աջ կողմում, վորպես թե կուսահեց տիրուհու մտածմունքը և ժպտալով ասաց.

— Մի վարանեք, մեղանից յուրաքանչյուրն ընդամենը յերեքական դոլար ունի՞: Բայց մեղ պատվիրված և վճարել:

Յերկար հորդորելուց հետո միայն տիրուհին վերցրեց հասանելիք գումարի կեսն, ասելով.

— Չե՞ վոր յես վորոց ոժանդակություն եմ ստանում այնտեղից...

Բնթրիքից հետո տղամարդիկ անցան մյուս սենյակը, վոր պատրաստել եր տիրուհին, և պառկեցին լայն թախտի վոր պատրաստել եր տիրուհին լայն թախտի վրա: Յերկուսն իսկույն քննեցին, իսկ յերրորդը, մեծը, կամացուկ գուրս յեկավ սենյակից, կանչեց տիրուհուն և յերկար զրուցեց նրա հետ: Գրանից հետո միայն նա վերադարձ ընկերների մոտ և քննեց:

Լուսինը բարձր կանգնած եր աշնանային յերկնքում: Արևմտյան քամին խշչացնում եր գեղնած տերեները: Սրահեաներով, յեղյամից խոնավացած քարերի վրայով Սրբահեաներով, յեղյամից խոնավացած քարերի վրայով կինը: Նա հաճախ չորս կողմն եր քորոց խրած տարիքավոր կինը: Նա հաճախ չորս կողմն եր գործականություն մանելուց հետո կինը տուն վերադարձ ու պառկեց: Բայց վատ քնեց, —հուզմունքը խանդարակավ ու պառկեց: Ամբողջ գիշերը նա մտաբերում եր իր ամուսնուն և մեծ վորուն: Ամուսնուն, վոր պարտիզան եր, սպանել ելին յապոնացիները մի ամիս առաջ, իսկ վորդին, վոր հանգափոր եր, այժմ ել գտնվում եր կըակի գծի վրա: Յերկար ժամանակ ե, վոր նրանից լուր չկա: Յերեկ յեկած ընկերներն ել նրա մասին վոչինչ չդիտեն: Ինչպես կցանանար, վոր վորդին, վորով նա այնքան հպարտանում եր, վոր իր մայրն ել և աշխատում ընդհանուր գործի իմանար, վոր իր մայրն են, վոր այսպիսի պատասխան վերաբերյալ:

Տիրուհին վաղ առավոտյան վեր կացավ: Հյուրերը գեղ քնած ելին: Աշխատելով, վոր աղմուկ չըարձրանա, նա սկսեց իր տնային գործերով դրազգել և հաճախ հոգտած թյամբ նայում եր հյուրերի սենյակը՝ չի զարթեցրել արրությամբ: Ահա և թեյը պատրաստ ե: Տըորած բակլան դյոք նրանց:

վոր հասկապես տառալիված եր պղպեղով հյուրերի համար, ամբողջ սենյակը լցրել եր յուրահատուկ հաճելի հոտով: Տրորած բակլան թավայով գրված եր տաք ջրի վրա: Տիրուհին խնամքով սրբել եր հոդե հասակը և հյուրերի համար լվացվելու տաք ջուր եր պատրաստել:

Տան դաները բաց են: Սկսեցին մտնել հանգափորհները: Տիրուհին նրանց բոլորին հյուրասիրեց թեյով և տաք «մանտույով», վոր բերել եր հարեւան ճաշարանից: Մարդիկ գալիս, գնում եյին: Առավույտն հերթափոխի ժամանեակն եր: Իսկ հյուրերը գեռ քնած եյին:

Հարեւան դանից վազեվագ յեկավ մի յերեխա և հայունց, թե ճանապարհով յապուական յերեք գինովոր են զալիս: Ամբողջ գիշերը նրանք հարթած թրե եյին գալիս շըշակայքում, իսկ այժմ գալիս են Մինտուուզուու:

Տիրուհին շտապ զարթշցրեց հյուրերին և պատմեց նրանց այդ բանը: Յերկուսն իսկույն վերցրին ատրճանակները, բայց նա հետ պահեց նրանց ու տապաց.

— Դուք մի՛ անհանդստացեք, յես իսկույն ձեզ կտանեմ բանջարանոց, այնտեղ կթագնիւք, մինչեւ ձեզ կանչեմ:

Ավագը հարցրեց:

— Իսկ դուք ի՞նչ պիտի անեք նրանց:

— Յես նրանց հախից կդա՛մ, կարիք չկա, վոր դուք խառնվեք այս զործին և ոխոկի յենթարկեք ձեզ, դուք ավելի կարեւոր զործեր ունեք:

Յերեք լնկերները զնացին բանջարանոց և թաղնվեցին ծղոտի մեջ: Տիրուհին վերապարձավ և, վորպես թե վոչինչ չի պատահել, խոհանոցում շարունակեց զբաղվել իր դուրծով: Հանգափորները զնացին աշխատանք:

Շուտով կրակոցներ լսվեցին, հաջնեցին չները, դես ու դեն նետվեցին հայերը—յերեւացին յապոնական յերեք զինվոր, վորոնք հաղիւ եյին կարողանում վոտքի վրա կանգնել:

Յապոնացիներն ուղղակի յեկան գիշերելու տունը, աղմուկով սեղան նստեցին և պահանջեցին թեյ ու ողի: Տիրուհին նրանց համար տաքացրեց բրնձի թունդ ողի և սեղանի վրա դրեց աղած, մանր կոտորած շաղկամ: Յապոնա-

ցիները խմում, աղմկում եյին և ձեռք չեյին քաշում տիրուուցու:

— Իսկ աղջիկ ունե՞ս: Մեղ աղջիկ տուր:

Տիրուհին նրանց տոնն ընկորինակելով կոտրտված չինարենով պատասխանեց.

— Աղջիկ ունեմ: Խմե՞ք, խմե՞ք, հիմա կդա:

Նա շարունակ ողի յեր տալիս նրանց, ժամանակ առժամանակ նայում եր լուսամուտից: Ավանը համարյա գատարկվել եր. բոլորը վախինում եյին յապոնական զինվորներից և թագույթի եյին:

Յապոնացիները խմում եյին, սպասելով տիրուուու աղջրկան: Վերջապես նրանք ճանձրացան աղջկան սպասելուց, և սկսեցին կպչել մորը.

— Աղջիկը չկա՛, դու ի՞նքդ:

Տիրուհին աշխատեց կոկետաբար ժողոտալ և ասաց.

— Լա՛վ, իսկույն,—և շարժումներով հասկացրեց նրանց, վոր զնում և ձեռքերը լվանալու և իրեն կարգի բերելու:

Արագ դնաց նա խոհանոց, յերկու րուռ աղացած պղպեղ վերցրեց և վերադառնալով զինվորների մոտ, նրանց յերեսին շղթաեց պղպեղը: Յապոնացիները զորովուացին ցամից, ցած գցեցին հրացանները և սկսեցին մմուել իրենց աշքերը: Սակայն յերկուուր, իսկույն գլխի ընկնելով, վերցրին հրացանները և անկանոն կրակ բաց արին: Հարմար վայրկյանին տիրուհին վերցրեց հատակի վրա ընկած յերրորդ հրացանը և վախավ տնից, աղաղակելով.

— Ողնեցե՞ք, ողնեցե՞ք, ողնության յեկե՞ք:

Անկյունից գուրս թռալ հարմանի տղան ու վագեց վուզով, ժողովրդին կանչելով: Նրա գոռոցին մարդիկ դուրս յեկան առաջնն այն տներից, վորտեղ մտել եր տիրուհին զիշերը: Նրանք վագեցին զետի գիշերելու տունը: Մինչ այդ տիրուհին գնաց բանջարանոց և կանչեց.

— Ընկերնե՞ր, ընկերնե՞ր, դուրս յեկե՞ք:

Յերեք թաղնվածները դուրս թռան ծղոտի միջից և վաղեցին զետի տուն: Մեկը տիրուուու ձեռքից իմեց հրացանը, իսկ յերկուուը հանեցին ատրճանակները: Յապոնա-

շիները՝ դդաստանալով, դռան մոտ սեղաններից, աթոռներից և կրնկահան արված դռներից բարիկադ սարքեցին։ Միքանի ըոպէ շարունակվեց հրաձգությունը։ Պաշարողներին ոգնության յեկան բանվորական ավանի բնակիչները։ Ընդհանուր ուժերով յապոնացիները, վերջապես, դինաթափարովեցին և կապոտիցին։

Ավանի բոլոր տներից, հանքահորերից հազարավոր մարդիկ համարվեցին հրապարակում։ Ավան յեկածներից ավագը բարձրացավ նստարանի վրա և բաց արակ միտինդը։ Նա կոչ արեց հանքափորներին և դյուղացիներին պարտիզանական ջոկատները մտնել և, միանալով, ինքնապաշտպանության ջոկատ կազմակերպել։ Նա ասում եր, թե չպետք է վախենալ յապոնացիներից, թե կոխը կարելի յեսկան նաև դատարկ ձեռքերով, դենք կճարվի։ Վորապես որինակ նաև բերեց տիրուհու հերոսական վարմունքը։

Հավաքվածները ծափահարեցին արխասիրտ կնոջը և ինդրեցին պատմել, թե բանն ինչպես յեղավ։

Նա, ծանր չունչ քաշելով, ասաց.

— ... Ի՞նչ եմ արել յես, ընդամենը միայն յերեքին ողնեցի վերցնելու... Ա՛յ, յերբ դուք կոնաք այս ընկերների հետ, տեսե՞ք, յապոնացի շատ սատանաներ ջարդեցեք։ — Դառնալով յեկվորներից մեծին, նա ասաց—յերբ կտեսնեք իմ վորդուն, պատմեցեք, թե յես ինչպես կարողանում եմ, վրեժինդիր եմ լինում և վրեժինդիր կլինեմ նրա հոր մահվան համար։

Ավագը պատասխանեց նրան.

— Լա՛վ, բայց դուք չուտով ինքներդ կտեսնեք ձեր վորդուն։

Միտինդից հետո մոտ հինգ հարյուր հանքափոր և դյուղացի յանկություն հայտնեցին պարտիզանական ջոկատը մտնելու։

Յերեք կոմունիստները դուրս յեկան ավանից ջոկատի դլուխն անցած։ Նրանց ուղեկցելիս իրար կողքի դնում եին մուղ-կապույտ գգեստով կինը և մահակով դինված յերեխան։

Վերջին տներն անցնելուց հետո, կինը հրաժեշտ տվեց

ջոկատին և հանցանք դործածի տոնով ատաց, դառնալով մեծին։

— Յես կանչել եյի ժողովրդին, վոր ձեզ հետ հանդիպեն յերեկոյան, բայց ավելի շուտ գուրս յեկավ։

ՄԱՐՏԻԿ Պ ԲՈՅԵՍՈՐԾ



բովեսոր Յան Սյուլինն ավելի քան հիսուն տարեկան է։ Հայտնի գիտնական լինելով, նա յերկար տարիներ գասախոսություններ և կարգացել Բեյալինի համարանում, վայելել և ուսանողների խորը հարգանքն ու սերը։

Յապոնացիները խորժեցին Տյանցզին և Բեյալին։ Ինտելիւնտներն առաջին հերթին տակնուվրա արին կուլտուրական հիմնարկությունները։ Տյանցզինում հռչակավոր Նանկայան համարանն ավերակի վերածվեց։ Բեյալինի համարանները քարուքանդ արվեցին կամ յապոնական զինվորների զորանոցներ գարձելեցին։ Վո՛չըլլիվ հաշիվներով, յապոնացիները Զինաստանում ավերել են քաննինդ բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Հենց վոր յապոնացիները Բեյալին խորժեցին, նրանք ձերբակալեցին և գնդակահարեցին յերկու հարյուր ժուռնալիստ, ուսանողու պրոֆեսոր։ Պրոֆեսոր Յան Սյուլինին հաջողվեց թագնըվել։ Նա ասաց իրեն։

— Յերկը ծաղկման կամ կորստի համար պատասխանատվություն է կրում ամեն մի չինացի։ Ժամանակն է գործի անցնելու։

Յեկ Յան Սյուլինը Բեյալինի ու Տյանցզինի ուսանողներից հազիր հոգի հավաքեց ու կազմակերպեց Արևմտյան-հերեյի պարտիզանական ջոկատը։

Պարտիդանների կյանքը շատ ծանր էր: Որպես յերկու անգամ ուսումնական կյանքը պատրաստ էր ինձ, հաղնում ելին գործ գույշնի կոչութեած գործվածքից պատրաստված զենսում, որեւով չելին կարողանում լիւացվել և վոչ մի որ չելին կարողանում հանդիսան քննել: Բայց պրոֆեսորն ու ուսանողները չելին վհատվում: Երանք գեռ նոր ելին միայն սկսել իրենց կոխվը հանուն հայրենիքի, աղատության և անկախության: Յապօնացիները շարժմեցին գետի հարավ: Յան Սյուլինը տարավ իր ջոկատը Ցինցինի միջով և շուրջանց արեց թշնամութեալից: Ճանապարհին ջոկատը մեծ աշխատանք կատարեց թշնամուն հակահարված տալու համար ժողովրդական ուժերը կազմակերպելու ասպարեզում: Պինչանում Յան Սյուլինը տեղական բնակչությունից յերկրորդ պարտիդանական ջոկատ կազմակերպեց: Եյանյենդուան ուղեկալի մոտ նա չինական նահանջող զինվորներից յերրորդ ջոկատը կազմակերպեց: Այդ ժամանակ Լինչանում գտնվում ելին առանձին պարտիդանական խմբերը. Յան Սյուլինը դրանցից կազմեց չորրորդ ջոկատը: Ներցյույնում նա կազմակերպեց չինական պարտիդանական այդ ջոկատներն ուղեցին կոխվել յաղոնացիների դեմ...

Լինչանում տեղավորված եր յապոնական մի զորամաս, իսկ չորսորդ ջոկատի համարյա բոլոր պարտիզանները լինչանի բնիկներ ելին : Երանք Յան Սյուլինից թույլտվություն խնդրեցին մաքրելու իրենց հայրենի քաղաքը յապոնական դավթօղներից : Յան Սյուլինը համաձայնվեց :

Պարտիզաններն անհկատելի կերպով կիսլ մոռեցան քաղաքի պարբուդներին և Արևմտյան դարպասից Համուռն թափով գրոհ ավին : Յաղոնացիները խուճապի մատնված փախան Սրբելյան դարպասով և քաղաքից յերեսուն լի հեռացան : Պարտիզանները պարենի մեծ պաշար վերցրին և իրենց հարենակիցներին ազատեցին յաղոնական ճնշումից :

Գառլոչենից հիսուն լի դեպի հյուսիս Դունաույում
կանգնած եր յաղոնական կայազորը։ Մի գիշերվա մեջ

Յան Սյուլինը յերեք անդամ դրոհ տվեց նրա վրա, սպանեց
շատ յապոնացիներ և խլեց մեծ քանակությամբ ռազմա-
մթերք։
Յապոնական յերեք հարյուր զինվոր շրջապատեցին Յան
Սյուլինի ջոկատները։ Յան Սյուլինը քաջվեց սարերը, իր
հետ տանելով դյուզի բոլոր բնակիչներին։ Յապոնացիներն
այրեցին դյուզի բոլոր տները։ Առավոտյան ժամը 4-ին Յան
Սյուլինը պարտիզանների և բնակիչների հետ անսպասելի վե-
րադարձագլ։ Յերեք հարյուր հոգուց բազկացած ավանդարդը
հարձակվեց յապոնացիների վրա։ Սկսվեց ձեռնամարտը։
Հակառակորդը խուճապի մատնված վախճակ, թողնելով
ամելի քան քսան հոգի սպանված։ Յան Սյուլինի ջոկատը
խլեց յերկու թնդանոթ, շատ արկ և յապոնական քառա-
սուն հրացան։ Կուլից հետո մարտիկներն իրենց ուժերը վե-
րականգնեցին թշնամուց խլած «միկադո» յապոնական
թիավաճքով։

Յապոնացիները կաչառեցին չին հարուստներ շժամ
յեղբայրներին, և դրանք «ի սրատիվ Յան Սյուլինի» մեծ
խնճույք կազմակերպեցին: Դավաճաններն ուղարկ ելին
խնճույքի ժամանակ կենդանի բոնել «վագր» Յան Սյուլի-
նին: Բայց նա կուահեց նրանց մտադրությունները: Նա
խնճույքի յեկավ միքանի մարտիկների հետ: Յերբ նրա
համար յերբորդ անդամ գինի լցովին, նա բարձրացրեց բա-
ժակը, ազգանշան տալով իր մարտիկներին: Զժան յեղբայր-
ները կապուտիցին: Այն զինված մարդիկ, վորոնց հանձ-
նարարված եր բոնել Յան Սյուլինին, անցան նրա կողմք:

Յան Սյուլինի ջոկատներն են մտնում առասպահ յոթրո
հարյուրից—Հինգ հարյուր հոգի: 1938 թ. վետրվարի վեր-
ջին նա ուներ արդեն ուժը ջոկատ՝ բաղկացած սիլվի քան
յերկու հազար մարտիկից: Բացի դրանից, նա կազմակեր-
պեց միքանի հարյուրական հոգուց բաղկացած վարժական
յերեք դունգ: Արևմտյան Խերեխի պարտիզանական ջոկատ-
ների շտաբն իր մոտ կազմակերպեց բանվորական բիկպադ-
ներ, վորոնց 110 անդամներն աշխատում են պարտիզանների
գործողության շրջաններում և գործադիրության մեջ ադի-
տացիոն-պրոպագանդիստական ու կազմակերպական աշխա-


1. *Ljūn* *lēku* *lēlēnēmēlēmē* *lē*:

տանք'են կատարում։ Բոլոր գյուղերում ու շրջաններում կազմակերպված են յերկրի փրկության հակայապրնական միություններ։

Սիանի բնակչությունը Յան Սյուլինի ջոկատներին ողելու համար հանդպանակեց յերկու հազար դոլար և մեծ քանակությամբ ռազմական հանդերձանք, զգեստ ու սպիտակեղեն։ Քսան յերիտասարդներ, այդ թվում չորս աղջկի՝ արեմտյան լիեբեյի պարտիզանական շրջաններում աշխատանք տանող բրիդադը, միացալ Յան Սյուլինի ջոկատին։ Նրանք Յերիտասարդության ռազմական ժամանակակից դասընթացների ունկնդիրներ, Սիանի ժամանակավոր համալսարանի և ուսումնական այլ հաստատությունների ուսանողներ ելին։ Թիկունքն ոգնում է Յան Սյուլինին փողով, ռազմամթերքով, հանդերձանքով և մարդկանցով։

Զինական «Սինխուաժիբառ» թերթը գրում է։
«Պրոֆեսոր Յան Սյուլինը, այդ խաղաղ քաղաքացին և Փիզիկապես թույլ մարդը, այսոր մարտիկ, հայրենիքի պաշտպան և դարձել»։

ՄԻԹԵ ԴՈՒՔ ՅԵՐԿԱԹՅԱՅ ՅԵՔ



ո Յունիտնը Շանսի—Չախար—Խերեյ սահմանամերձ շրջանից յեկավ VIII բանակի շտաբը։

Միքանի ամիս նրան այստեղ չելին տեսել։ Գիտեյին միայն, վոր նա, շատ ընկերների հետ, մնացել է յաղոնացիների զրաված տերիտորիայում և համառ կռիվ է մղում զավթողների դեմ։ Նրանք հետ ելին խլել ամելի քան տասը զավառ, ամրություններ պայթեցրել, կտրել ելին հաղորդակցության դժերը չորս ճանապարհների վրա... կարծեք թե

գործ ունելին ինչ-վոր գիտական եքսպերիմենտի հետ, այսպես ելին մանրամասն հարցաքննում լո Յունիտներին ամեն բանի մասին՝ ռազմաքաղական դրության, թշնամու հարձակման և նահանջի, մարտերի մանրամասնությունների, ընկերների առողջության մասին... Զրուցը քանի դնում ավելի հետաքրքիր եր գառնում։ լո Յունիտնը պատմեց հետեւյալը։

«Յերբ յապոնացիները գրավեցին Շիցվաչուանը, յես մնացի Ֆուպինում։ Ճակատից մեր բանակը նահանջում եր։ Զինվորները բարկանաչափ կարգապահ չելին, վոմանք վորսում ելին կուլիներ—բեռնակիրներ և դրանով խրտնեցրին ռազմական նախապատրաստություն անցնող կամավորների ջոկատներին։ կամավորները ցրեցին։ Նահանջող զինվորները ժողովրդի մեջ պարտվագական տրամադրություններ ելին տարածում։ Դուք գիտեք, նահանջող զինվորը շարունակ չափազանցնում է հակառակորդի ուժերը, վորպեսզի արդարացնի իրեն։ Նրանք ասում ելին մեզ։ «Յերբ յապոնացիները հարձակում են, վոչ վոք չի կարող նրանց կանգնեցնել։ Միթե դուք, VIII բանակը, յերկաթի՞ց եք։»

Զնայած այդ բոլորին, մենք մնացինք, կարդ հաստատեցինք, համոզեցինք բնակչությանը, վոր տուն վերադառնա։ Զի՞ վոր դա մեզ համար անհրաժեշտ եր անդամ ռազմական տեսակետով։ մեզ հարկավոր են ուղեցույցներ, յերբ մեր ջոկատները մի վայրից մյուսն են շարժվում։

Ֆուպինի բնակիչներն սկզբում կարծում ելին, վոր մենք ել կնահանջենք։ Բայց մենք վճռեցինք մնալ պարտիզանական կումը մզելու համար։ Մյուս զորամասերը նահանջեցին։ Ժողովուրդը, վախենալով անկարգություններից, թագովեց լեռներում։ Տեսնելով, վոր զորամասերը գնացին, և սպանելով, վոր դրանց հետեւ կրան յապոնացիները, բնակիչները վճռեցին վորեւ մնացած զորամաս գտնել, նրանցից ողնություն և պաշտպանություն ստանալու համար։ Յեվ յերբ նրանք տեսան, վոր մենք մնացինք, տուն վերադարձան և դիմեցին մեզ, վոր մի խորհուրդ տանք։

Բարեբախտաբար մեզ հետ վորոշ գումար փող ելինք վերցրել. զա մեզ հնարավորություն տվեց գյուղացիներին

վճարել նահանջող զինվորների պարտքերը։ Հիշում եք, յերբ մենք մեծ արշավանք կատարեցինք, հետեւից յեկող զոքամասները յերեւմն վճարում ենին սոսաջից անցած այն զորամասի պարտքերը, վորը չեր կարողացել այդ վճարումը կատարել։ Այս անգամ ել մենք այդպես արինք, վորպեսդի պահանջներ մեր ամբողջ բանակի հեղինակությունը։

Մենք բանկեաի հրամիրեցինք տեղական հարուստներին՝ շենշիներին, պատմեցինք նրանց յերկրի ծանր վիճակի մասին և խնդրեցինք, վոր նրանք ունեն պարտիզանների մատակարարմանն ու սպառազինմանը։ Դուք դիտեք, վոր ներեց նահանդի ժողովուրդը շատ հրացան ունի։ Տեղական շատ շենշիներ իսկապես վոր առատաձեռն դուրս յեկան։ Նրանք պարտիզանների համար հրացաններ բերեցին և առացին։ «Այս զենքով դուք կքշեք թշնամիներին, պետք չե վոր դա մեր առանց պառկած մնա և ժանդութի»։ Մյուսները բաց արեն ցորենի շտեմարանները և ասացին։ «Պարտիզանների համար վոչ մի բան չենք խնայի, վերցրեք բոլորը»։ Սակայն այնպիսիներն ել կային, վոր վոչինչ չեյին տալիս, բայց դրանց թիվը շատ քիչ եր։

Հետո մենք հասարակական կաղմակերպությունների հետ միասին վորոշեցինք, թե ինչ պիտի անել մոռինի պաշտպանության համար։ Կաղմակերպվեց պարտիզանական մի խումբ, վոր կամավորների ջնկատ կոչվեց։

Ֆոպինը ճակատ դարձավ, դրա համար ել մենք յեկատային տուրքի պլան մշակեցինք, վմբ հաստատել եր դեմքը Յան Միշանը։

Փողինում մենք հրատարակում եյինք մի փոքրիկ թերթ, տեղեկություններ տալով տեղական բնակչությանը մեր յերկրի և աշխարհի նորությունների մասին։ Հեկոտգրավող այդ թերթը մեծ հաջողություն ունեցավ. լույսը բացվելուն պես եքսպեդիցիայի դռանը շատ ժողովուրդ եր խոնվում։

Մեկ շաբաթվա վարժությունից հետո վարտիզանական ջոկատը, մեր հեծյալ զորամասի հետ միասին, գրավեց Յուրանը։ Այդտեղ գտնվում եյին յապոնացիների ոսպմա-

կան պահպատները։ Մենք հոկայական քանակով թխվածք ու մսի կոնսերվինք ձեռք բերինք։ Դրանց մի մասը բաժանեցինք Յուրանի տեղական բնակչությանը։ Հազարից ավելի արկղ ել մնաց։ Մոտ հաղար մարդ ողնեցին մեզ դրանք ֆուլին հասցնելու, և այստեղ մենք գա բաժանեցինք տեղական ժողովրդին։

Պարտիզանների առաջին հարձակումը հաջող եր։ Յերկրորդ անգամ նրանք, արդեն ինքնուրույն գործելով, վանդույում հարձակվեցին յապոնացիների վրա։ Բանը յերեկոյան կատարվեց։ Յապոնացիները գործի գցեցին գնդացիրները։ Զնայած դրան, նրանցից յերեք հոգի սպանվեց, իսկ պարտիզանները կորցրին միայն մեկ մարտիկ։ Դա ել հաղթություն եր։

Սպանված պարտիզանը մի հետ պարտիզանի յեղարյուն եր, վոր մահապատէի յեր յենթարկվել գյուղացիական ապատամբությանը մասնակցելու համար։ Նա պահում եր կույր մորը։ Ֆուլինում մեծ միտինգ կաղմակերպվեցինք, վոր նվիրված եր յերիտասարդ պարտիզանի հիշատակին։ Միտինգում մենք շատ փող հավաքեցինք նրա մոր համար։ Պարտիզաններից մեկը իր վորուն տվեց պառավին, վորպես թոռ, վոր նա հոդ տանի պառավիի համար և շարունակի նրա սերունդը։ Միտինգում վորոշում ընդունվեց, վոր ողնեն հակայապոնական մարտիկների և հրամանատարների ընտանիքներին։ Յերիտասարդ պարտիզանի մահը խթան ծառայեց ստբողջ զավառը միացնելու և հակայապոնական տրամադրությունը բարձրացնելու համար։ Ժողովուրդը կամավոր կերպով մտնում եր պարտիզանական ջոկատները։ Հերք յետ հեռանում եյի այսուղից, միքանի նոր մեծ ջոները յետ հեռանում եյին անցնում։ Պարտիզատներ զինվորական վարժություն եյին անցնում։ Պարտիզատների գործունեյությունը ավելի ու ավելի լայն ու հաղաների գործունեյությունը ավելի ու ավելի մեծ սպառնալիք և մարձակ և դառնում, ավելի ու ավելի մեծ սպառնալիք և զառնում յապոնական զորքերի համար։ Յապոնացիները վախենում են թողնել դրաված քաղաքները, վորովհետև գյուղական վայրերում դրության տերը փաստորեն պարտիզաններն են»։



րա ամուսնական ազգանունը Զժառ յե, բայց նա սիրում է, վոր իրեն կանչեն աղջիկ ժամանակվա ազգանունով՝ Ֆին Վենդու։ Այժմ նա ավելի քան 60 տարեկան է։ Նրա մազերը սպիտակել են, դեմքը ծածկվել է խորը կնճիռներով, բայց աչքերը փայլում են առաջիւա պես։ Նա բնիկ լրացնիցի յե (Մանջուրիա)։ Յերբ յապոնացիները զալթեցին Մանջուրիան, խլեցին Զժառյի հողը։ Այդ ժամանակ նրանց բազմանդամ ընտանիքն ամեն տեսակ զրկանք կրեց։ Այդ բանը նրանց մեջ անջնջելի ատելություն առաջ բերեց դեպի յապոնական զալթողները։

Ֆին Վենդոյի վորդին, Զժառ Տունը և վերջինիս տասն ընկերները, Մյաո Կեսյուն և մյուսները պարտիզանների փոքրիկ ջոկատ կազմեցին։ Ֆին Վենդոն ողնում եր նրանց։ Նա ծախեց իր վերջին կահկարասիները և փողը տվեց վորդուն՝ ջոկատի կարիքների համար։ Յերկու տարի շարունակ Զժառ Տունի և Մյաո Կեսյույյի ջոկատը ծանր պայմաններում կալում եր յապոնացիների գեմ լյացնիցի դեպի հյուսի։ Յերիտասարդ Զժառ Տունը մտավ կոմունիստական կուսակցության մեջ։ Պարտիզանները թագնվում եյին անտառներում և լեռնային վայրերում։ Մատնիչի ցուցմունքով յապոնացիները պատճիչ եքսպերիցիա կազմակերպեցին «բանդիտներին վոչնչացնելու համար»։ Զժառյի տունը այրեցին, և ամբողջ ընտանիքը անողոք հալածանքի յենթարկվեց։ Մայրը յերեխաների և ծեր ամուսնու հետ փոխադրվեց Զախար և Շանսի նահանդների սահմանը։ Այդտեղ, Վայսյան դավառում, ընտանիքը նորից սկսեց հողագործությամբ զբաղվել։ Ֆին Վենդոն կարծում եր, թե այդտեղ նա իր ծերունի ամուսնու հետ հանդիսաւ կերպով կկարողանա անցկացնել իր վերջին որերը։

Յերեք անդամ բերք հավաքեցին։ Հետո այդտեղ ել յե-

կան յապոնացիները և նորից նրանց քշեցին իրենց վողորմելի հողամասից։ Բայց վոչ մի զրկանք չկարողացավ ընկերությունի Ֆին Վենդոյի վորդին։ Նա ուղերձով բեյզին, վոր այնտեղ ողնություն ստանա։ Սակայն շուտով յապոնական թիգանութները վորոտացին Լյուկուցզյայուում, և Բեյրինը իլեցին յապոնացիները։ Կոմունիստական կուսակցությունը Զժառ Տունին ուղարկեց Մինտուուգուու։ Այնտեղ Զժառ Տունը, իր ընտանիքի և հյուսիս-արևելյան նահանդների իր հայրենակիլցների հետ, կազմակերպեց Մինտուուգուուի հանգամուրներին և Բեյզինի ուսումնական հաստատությունների դպրոցականներին և ուսանողներին։ Դրանց հարեց XXIX բանակի զինվորների մի մասը, վորոնք գենք ունեցին։ Զժառ Տունը կազմեց կանոնավոր բանակի հետ և արդեն լոյն կազմակերպված կոլի սկսեց ընդդեմ ինտերվենտների։ Ֆին Վենդոն ընտանեկան խորհուրդ գումարեց։ Նա ասաց ամուսնուն։

— Այժմ ի՞նչ պետք է կորցնենք։ Մեր վորդին կովում է Մինչև վոր յապոնացիներին չըշեն Զինաստանից, մեղնից վոչ մեկը չի կարող հանդիսաւ լինել։ Սպա նա դարձավ աղջիկներին։ Մտարեցեք կառնինի որերը, յերբ մենք բոլորս պարտիզաններ եյինք, հիշեցեք Հյուսիս-արևելյան հակայապոնական «Յերկաթի և արյան» բանակը, ձեր յեղբայր Զժառ Տունին, վորն այդ բանակի ղեկավարն է։ Գնանք նրա մոտ։

Նա ծախեց իր վերջին չորերը, ծախեց մինչեւ անդամ միքանի վոսկե մատանիները, ընտանիքի այդ նվիրական նշանները։ Առանց ժամանակ կորցնելու, պարտիզաններին ողնություն ցույց տալով, նա կապվեց քաղաքի աղջային-հայրենասիրական շատ կազմակերպությունների հետ։ Աշխատանքը յեռում եր նրա ձեռքերում։ Մոր հետ տեսնելու համար Զժառ Տունը մի անդամ գյուղացու շորեր հազար և բանջարեղենի մի սայրակի հետ Բեյզին յեկալ։ Մայրը նրան հանձնեց հավաքված փողն ու զենքը։ Զժառ Տունը դրանք Բեյզինից դուրս տարապ բանջարեղենի տակ թագ-ցրած։

Ի՞նչպես աճեց և սպառազինվեց Զժառ Տունի ջոկատը։

ԲԵՐԱԿԻՆԸ ԳՐԱՎՈՒԵԼ ԵՆ յապոնացիները։ Քաղաքի դարպասները պինդ փակված են։ Քաղաքում քառս ե, անկարգություն, վայրագություն։ Յալոնացիները փորձում են տիկնիկային արմինխտրացիա ստեղծել։ Դավաճանները, միքանի վաճառված պաշտոնյաներ, համաձայնում են դրան...

Մութ գիշեր ե։ Քաղաքի խուլ փողոցներից մեկում հավաքվել են մի խուլք հայրենասերներ։ Քաղաքում և դրա պարիսպներից գուրս անընդհատ հրամագություն ե լսվում, լուսարձակները նայում են բոլոր ճեղքերը։ Ի՞նչպես ծլկվել, Չժառ Տունի մոտ գնալ։ Յելքը գտնված ե։

Ամբոցի պարսպի հյուսիս-արևմտյան անկյունում կեղտաջրի անցք կա, վոր գուրս և գալիս արտաքին փոսը։ Քսանչորս հոգի մեկը մյուսի հետեւից սողալով գուշը են գալիս այդ կեղտուտ անցքով։ Դա լայն չե, և միքանի «հաստիկները» դժվարությամբ են առաջ շարժվում այդ նեղ անցքով։

Գիշերը մութ ե։ Խիզախները շոշափելով սողում են ձորակներով, գետակների հուներով։ Տեղ-տեղ նրանց ձեռքը զինք և ընկնում, վոր դցել են XXIX բանակի նահանջող զինվորները։

Աքաղաղները կանչում են։ Շուտով առալուտյան ժամի չորսը կլինի։ Չժառ Տունը սպասում ե նրանց «Յերկարակեցության» տաճարի հետեւում։ Վատ կլինի, յեթե նրանք մինչև լուսաբաց չկարողանան թափնկել։ Կարճ սուլոց։ Քսանչորս խիզախներն ի մի յեն խմբվում և շատերը պարծենում են։

— Յես գտա՞:

— Յես ե՞լ։

— Իսկ յես յերկո՞ւսը գտա։

Բնդամենը գտել ելին տասնհինգ հրացան և յերկու ատրճանակ։ Պակաս բարեբախտներին առաջարկում են շարունակել վնատումները։ Այդպես Չժառ Տունի մարտական ջոկատը լրացվում ե քսանչորս հոգի զինված մարտիկներով, վորոնք դեռ յերեկ վոչնչով չեյին տարբերվում մյուս խաղաղ քաղաքացիներից...

Չժառ Տունի ջոկատից քառասուն ընտիր քաջեր գիշերն ուղևրեցին դեպի յերկորդ բանտը, վոր գտնվում ե քա-

դաշից դուրս, հյուսիս-արևմտյան դարպասի մոտ։ Նրանցից մեկը յապոնացու զգեստ ե հագել։ Նա շատ լավ է յապոներն խոսում։ Բնկերները կատակ են անում։

— Իսկական յապոնի ճո՛ւտ։ Յել ծիծաղելով գոչում են։ կորչե՞ն յապոնական խմակերիալիստները։

Տասնհինգ տարեկան մի տղա ցույց ե տալիս ճանապարհը։

Աշուն ե։ Խիստ քամին պոկում ե ծառերից դեղնած, թաց տերեւները։ Դաշտերում սպիտակին ե տալիս արծաթափայլ յեղյամը աստղերի առկայծող լույսի տակ։ Քառասուն խիզախները առաջ են շարժվում դաշտերով, անտառային արահետներով, խուսափելով մեծ ճանապարհից։ Նրանց շորերը թացացել են։

Ահա՛ և բանտի ճրագները։ Պարտիզան տղան մոտենում և դարպասին, բաղխում ե և գոռուում յերեխայի ձայնով։

— Բա՛ց արեք։ Յես Ռժան գյուղից եմ։ Յապոնական զինվորներն ուղում են ձեզ մոտ հանգստանալ...

Ժամապահները դանդաղում են։ Դարպասին ե մոտենում զգեստը փոխած պարտիզանը։ Նա ել ե բաղխում և հայՀոյում ե։ Լսելով յապոնական թունդ և տիրական հայՀոյանքը, ժամապահները իրենցից մեկին ուղարկում են բանտապետի մոտ։ Պետն ասում ե.

— Յալոնացիներին պետք ե ներս թողնել։

Նա տոնաթիւն համազգեստ ե հազնում և շտապում ե դեպի դարպասը։ Նա այստեղ վողույններ ե փոխանակում ծպտյալ յապոնացու հետ, գարպասը բացվում ե... և պարտիզանները ներխուժում են բանտի բակը։ Նրանք ըլջապատում են պահակատունը, վորտեղ քնած են վոստիկանները։ Ծպտյալ յապոնացին սկսում ե չինարեն խոսել։

— Վեր կենալու նեղություն մի կրեք, —ասում ե նա, — հանգիստ պակեցեք, չինացիները չեն սպանում չինացիներին։ Զենքը մենք ինքներս ել կվերցնենք։

Մոտ հիսուն հրացան արդեն պարտիզանների ձեռքումն են։ Հեռախոսի լարերը կտրտված են։ Կամերաների բանամեները գտնված են, կամերաները բացված, կանդալներն ու շղթաները ջարդված։ Հինգ հարյուր ութսունյոթ բան-

տարկյալներ, վորոնցից հարյուրը քաղաքական են, աղաս-
լիցին:

Սուլոց: Բոլոր բանապարկյալները դուրս են գալիս բան-
տից պարտիզանների հետ միասին: Նրանք անցնում են մոտ
տառը լի և կանգ են առնում դաշտում: Աստղերի լույսի
տակ բացվում ե միտինգը: Բանտի պաշտոնյաններին աղա-
տում են ուղեկցող պահակներից: Նրանցից մեկը, վոր Հատ-
կապիս աչքի յեր ընկել դեպի բանտարկյալներն ունեցած իր
անդութ վերաբերմունքով, գնդակահարվում ե, մնացածնե-
րին առաջարկում են դնուի, ուր վոր ուղում են, յեթե կա-
մենում են: Բոլորը, բայց ծերունիներից և հիմանդներից,
մտնում են Զժառ Տունի ջոկատը: Զոկատի մարդկանց թիվը
դրանից հետո հասնում ե չորս հարյուր հոգու, հրացաննե-
րի թիվը՝ հարյուր հիսունի:

Եելշանխուի կովում, Եելիլինի մոտ, ջոկատը քառա-
սուն հրացան ել ձեռք բերեց: Մի ամսում խրիեց մոտ չորս
հարյուր հրացան: Եելիլինում պարտիզանները դնեցին յեր-
կու թեթև գնդացիր: Սեպտեմբերի վերջին արդեն ալիլի
քան հինգ հարյուր հրացան և մինչեւ ութ հարյուր մարտիկ
ուներ ջոկատը: Զժառ Տունը աստիճանաբար միացրեց այդ
շրջանում գործող պարտիզանական բոլոր մանր խմբերը:
Հոկտեմբերին ջոկատն արդեն ուներ հազար ութ հարյուր
մարտիկ, հազար չորս հարյուր հրացան, քառասուններ
թեթև և յերկու ծանր գնդացիր:

Քաղաքից լուր հասալ, թէ յապոնացիները «պատմիչ
եքսպերտին» յեն կազմակերպում: Վեց հազար զինվոր և
միքանի ինքնաթիու պատրաստվում են ջարդել Զժառ Տունի
ջոկատը: Յապոնացիները յերեք զորացյունով արդեն դուրս
են գալիս Եելիլինից:

Եելիլինի արևմտյան շրջանի պարտիզանները խորհր-
դակցության համար վեցին: Լեռան ստորոտում, փոքրիկ
խոճիթում նավթի լամպի լույսի տակ ջոկատների ներկա-
յացուցիչները նստած են սեղանի շուրջը: Նրանք համաձայ-
նություն են կնքում վոխաղարձ ողնության մասին:

Յուրաքանչյուր սարի վրա, յուրաքանչյուր ուղեկալի
մոտ մարտիկների վոքը խումբ և դրվում, վոր թշնամին

Հկարողանա գաղափար կազմել նրանց թվի մասին: Ուղե-
կալիների միջև սերտ կապ և հաստատվում: Հրամանատա-
բությունը միաւնական ե, բայց յուրաքանչյուր խումբ
սկետք և ինքնուրույն կերպով վարի ուղմական գործողու-
թյունները:

Դուռում են ինքնաթիուները, դղրդում են բեռնատար
մեքենաները: Յապոնացիները առաջ են շարժվում պարտի-
զաններին միանուելու: Բայց-ան գետի մոտ, մեծ լեռան ստո-
րոտից մեկ և կես կիլոմետրի վրա, բեռնատար մեքենաները
կանգ են առնում: Տկակում են դնդացիները; սկսվում ե
հրացանների կրակոցը: Սակայն յապոնացիները վոչինչ
յերեան չեն բերում: Դուրս ե գալիս, վոր նրանք խոր՝ ու են
կրակել: Այդպես նրանք «զվարձացան» յերեք անդամ: Վեր-
ջապես, յերբ կես կիլոմետր եր մնացել պարտիզաններին
շանելու, իրենց հարմար թվացող տեղ ընտրելով, նրանք
սկսեցին խրամատներ փորել. լովեց յերկու կրակոց, — և
յերկու յապոնացիները ընկան: Յապոնացիները խուժապի
մատնվեցին և նահանջեցին:

Յուրաքանչյուր ուղեկալի մոտ նույն պատկերն եր:
Խոկ ինքնաթիուները կուրոբեն դուղում եյին կիրճերի և ան-
տառների վրա, կատաղի ոմքակոծում եյին, առանց վորեկ
մեկին վնաս հասցնելու:

Յապոնացիներն ըստ յերեսութիւն հասկացան, վոր արագ
հարձակմամբ հնարավոր չե վոչնչացնել Զժառ Տունին:
Նրանք սկսեցին նեղել պարտիզաններին շուրջանց շարժ-
մամբ: Անընդհատ մահարեր բեռ եյին զցում ոմքակիրները
և վորոտում եյին թնդանոթները:

Անհավասար կոխը յերկու շարաթ տեսեց: Պարտիզան-
ները կազմակերպված կերպով հետ եյին քաշվում, խոկ յա-
պոնացիները վոչինչ չնկատելով, շարունակում եյին «շրջա-
պատել» հակառակորդին: Վերջապես նրանք փակեցին ընդ-
գրկման ողակը, բայց ողակի մեջ արդեն վոչ մի պարտի-
զան չկա՞ր: Յերբ «պատմիչ եքսպերտին» բելին վերա-
դարձավ, պարտիզանները զրավեցին իրենց նախկին գիր-
քերը: Ճանապարհին նրանք գյուղացիներից ստացան մի
թնդանոթ, վոր թողել եյին XXIX բանակի զորամասերը նա-

Հանջելու ժամանակ: Դժբախտաբար ոմբարկղում ընդամենը յոթի արև եր մնացել:

— Սա ել մի բա՛ն է, — ծիծաղելով ասացին պարտիզանները:

Այդպես աճեց և կոփեց մարտերում Զժառ Տունի ջոկատը: Աստիճանաբար, մեկը մյուսի հետեւից, այդ ջոկատի մեջ սկսեցին հավաքվել տեղական գյուղացիները: Դա հաշողվեց ֆին Վենդոյի ողնությամբ:

Երբինի անկումից հետո յապոնացիների կողմից կաշառված դավաճանները կազմակերպեցին այսպես կոչված «դպտունների» ջոկատը խուլիդաններից, կուլակներից, գողերից և բանդիտներից: Այս խումբը շրջում եր գյուղերը, կողոպտում և ծեծում եր գյուղացիներին: Այդ ժամանակաշրջանում գյուղական բնակչությունը վոչ մի աջակցություն չեր ցույց տալիս Զժառ Տունի պարտիզանական ջոկատին, վորովհնետե նաև լավ չդիմեր; թեով և ինչի համար և կովում: Այն ժամանակ ջոկատը Ֆին Վենդոյին ուղարկեց գյուղերը: Նա շրջում եր խրճիթից խրճիթ և պատմում եր Հյուսիս-արևելյան նահանդների ժողովրդի տառապանքների մասին, յապոնացիների դաշտանությունների մասին, վորոնք կոտորում են հազարավոր խաղաղ բնակիչներ, խում են հողը, հրկիզում են տները և բանաբարում են կանանց:

— Ժողովրդի լավագույն գավակները, — ասում եր Ֆին Վենդոն, — չեն ցանկանում չլու ստրուկ լինել և պաշտպան են կանգնում իրենց հայրերին, մայրերին, կանանց ու յերեխաներին:

Նա պատմում եր նաև իր վորդի Զժառ Տունի մասին:

— Բանի գեռ յապոնացիները չեն վանդվել Զինաստանից, մենք հանգիստ չենք ունենա, — ասում եր նա: — Մենք, պարտիզաններս, պաշտպանում ենք ձեզ, և դուք պետք եմք ողնեք...

Գյուղացիները, լսելով նրան, դլխով եյին անում և ասում:

— Ողնել ձեզ — նշանակում է հենց մեզ ողնել:

Ֆին Վենդոն վոչ միայն նոր մարտիկներ եր ներդրավում վորդու ջոկատը, այլև նրան հաջողվում եր նաև ռազ-

մամթերք ինեւ թշնամուց: Ամեն անդամ, յերբ Ֆին Վենդոն նկատում եր առանձնացած յապոնական ջոկատ կամ թշնամու տրանսպորտ, նա արագ կերպով հաղորդում եր այդ բանը պարտիզանական ջոկատին և ընտիր մարտիկների հետ ընդառաջ եր դնում թշնամիներին: Պարտիզանները թագնուշվում եյին հարմար վայրերում և, յապոնական ջոկատը կամ բեռնատար մեջենան յերեալիս, դարձանից անօպասելի հարձակվում եյին նրանց վրա: Ֆին Վենդոն վա «այցելություն» ե անվանում:

Յերիտասարդ զույգը յեղավ Վեյնանում, Խուախինում և այլ վայրերում։ Սիդունը ամեն տեղ արտանկարում եր վայրերի հատակագծերն ու գծագրերը, կազմում եր բոլոր փոստային կայանների ցուցակը։ Հունվարի 27-ին «Քաղաքահնի պրոպագանդայի սեկցիայի վարիչը» հանկարծակի ձերբակալվեց Վեյնանում։

Դորձը հետեւյալ ընթացքն եր ստացել։ Զժանի ընկերուհի Կունը «վարիչի» հանձնարարականույլ գնացել եր Յառոյան և այնտեղ չեր գտել Տանին, վորի հասցեյով նամակ եր բներել։ Նա վերադարձել եր Սիան, ներկայացել եր VIII բանակի և Սիանի շատրի ներկայացուցչություն ու ամեն բան պատմել։ Շատրը հաղորդել եր Հատուկ բաժնի ծոկատին, վորն սկսել եր փնտուել թարմ հետքերով և, վերջապես, Կի Սիդունին դտել եր Վեյնանում։ Դրանից քիչ առաջ «վարիչը» հեռադրել եր Յառոյան՝ Կունին, թե Տանը փոխադրվել ե իցզյուն և թե նա կարող ե գնալ այնտեղ։ Սիդունն աշխատում եր աղջկան վորքան կարելի յեղեղի հյուսիս ուղարկել։ Բայց, բարեբախտաբար, Կունը հեռադրիր չեր ստացել։

Վեյնանում, հասարակական կարդի բյուրոյում, վորտեղ Սիդունը հսկողության տակ եր գտնվում, նա փորձեց

ուեռ փախչել: Սիանիում նա խոստովանեց միայն, վոր ինքը խարել և աղջկան, բայց բացասեց, վոր յապոնական լրտես է: Յերբ նրան թերին Յանան և բանտարկեցին, նա այդտեղ ել փախչելու փորձ արեց: Դա նրան չհաջողվեց: Վերջինիրդու նա խոստովանեց իր հանցանքները:

Տեղի ունեցածի մասին պատմելուց հետո, դատախազն սկսեց թվել Կի Սիգունի հանցանքները:

— Ամփոփելով նրա հանցագործությունները, մենք դրանք չորս խմբի յենք բաժանում:

Առաջին: Կի Սիգունը, յապոնական Հատուկ բաժնի ամենիջական գեկավարությամբ, դավաճանական, լրտեսական աշխատանք եր կատարում: Նախանցյալ տարվա ձմբուանը, յերբ Սույուանիում չինական բանակը հետ եր մզում յապոնացիների հարձակումները, յապոնական Հատուկ բաժնը նրան աշխատանքի ուղարկեց Սույուան: Բնդամենն ութ հոգի յեր ուղարկվել: Նրանցից յոթին ձերբակալել եր զեներալ Ֆու Յզո-ին, միայն մեկն աղատուել եր կալանքից հանցանշանի բացակայության պատճառով: Դա հենց Կի Սիգունն եր: Այն ժամանակ նա չեր բանվել, վորովհետեւ նրա տեխնիկան մյուսների տեխնիկայից ավելի բարձր եր: Նա ինքը պատմել է Զժամին, վոր ուրիշները «գործի մեջ» անպատճառ գրություններ են գրում և դրա համար ել հեշտ են բնիվում ձերբակալվելիս: Իսկ ինքը, լավ հիշողության տեր լինելով, այդպես չի վարվում, և դրա համար ել նրա մոտ վոչ մի մերկացուցիչ նյութ չեն գտնում: Բացի դրանց, նա միքանի կոստյում ունի անճանաչելի դառնալու համար՝ կանացի զգեստ, բանվորի և գյուղացու կոստյումներ և այլն: Նրա բոլոր չորերի վրա գրված է 24 համարը:

Դատախազը սեղանի վրայից վերցրեց չորը և ներկայալողներին ցույց տվեց կարմիր փոքրիկ «24» համարը Կի Սիգունի գոտիների վրա:

— Յերկրորդ: Կի Սիգունը ամեն բան արել է՝ հակայտական աղքային ճակատը քայլայելու համար: Ինքը Կի Սիգունը ասել է. «Սկզբից հենց Յապոնիան շարունակ փորձում և քայլայել միանական ճակատը»: Կի Սիգունը ամեն ջանք գործ է դնում իր տիրոջ այս առաջադրանքը

Լատարելու համար: Կի Սիգունը՝ Սահմանամերձ շրջանը դիտմամբ խորհրդային իշխանություն և անվանում ուղանով հենց գավաճանորեն փորձում և խախտել յերկրի միասնությունը: Նա լուրեր և տարածում կոմիսարակցության ու գոմինականի միջև հարաբերությունները խղթելու մասին, այն բանի մասին, թե գոմինականն իրը փորձում և վոչնչացնել VIM բանակը, այն բանի մասին, թե Խորհրդային Միությունն իրը թե չի ուղարկ ունել Զինաստանին և այլն: Այդ բոլորն արվում եւ յապոնական ադրեսորների առաջադրանքներով:

— Յերրորդ: Կի Սիգունն ամեն կերպ զրադարտում է չինական գինակած ուժերի բարձրագույն հրամանատարությանը: Բազմական խորհրդագույն Զան Կայ-շին ղեկավարում և չինական ժողովրդի գիմադրությունը յապոնական ազրեսորներին, նրան դրա համար ել ատում են յապոնական զավթողները: Կի Սիգունը, կատարելով յապոնական հետախուզության առաջադրանքները, ատում եւ, վոր թեև բոլորը, սկսած Զան Կայ-շինը մինչև հետին խաղաղ ինակիչը, հավատացած են, թե վերջնականապես կհաղթեն յապոնացիներին, —բայց թե դա ցնորդ ե, ինքնախարեյություն: Նա հերբուժում է, թե Զան Կայ-շին ձերբակալել եր մորը, զիտավորյալ կերպով վարկարեկելով Զան Կայ-շինը, խախտելով նրա հեղինակությունը:

— Չորրորդ: Վորպեսզի Զինաստանին ստիսի անձնատուր լինել Յապոնիային, Կի Սիգունը կեղծ լուրեր և տարածում: Անցյալ տարի զեկուեմբերի 27-ին նա լուր տարածեց, թե յապոնական բանակը անցել է Վեյնե գետը, թե չինական բանակը նահանջում է Խուան-խե գետով, թե Սիանը վտանգի մեջ ե, VIM բանակի ներկայացուցչությունը չախչախմած ե, նահանջող չինական զինալորները փախչում են Սիան, Յանանը ձեռքից դուրս ե յեկել, կառավարությունը Սահմանամերձ շրջանից փոխադրվում է Տունխուտեալ այլն: Կի Սիգունն ինքը խոստովանում է. «Դեկտեմբերի 12-ի գեպքերից հետո յես, յապոնացիների զիրեկախիներով, զազանի աղիտացիոն աշխատանք եյի կատարում, խարելով Սիանի բնակչությանը: Ես հաճախ ասում եյի, թե պատեսիանի բնակչությանը:

բաղմի մեջ Զինասահանն անսպայման պարտություն կկրի և այլն»: Նա հաճախ դնում եր զանազան դպրոցներ ու համալսարան՝ համոզելու սովորողներին ու ուսանողներին, վոր նրանք չտաքանան, չլարմին ուսումից, շարունակեն հանդիսու կերպով դիտությամբ զբաղվել: Նա ուղում եր խանդարել յերիտասարդությանը ոյուղում աղիտացիոն աշխատանք կազմակերպելուն: Նա զրադարսում եր VІІ բանակին, վորովեազի ողնի յապոնացիներին ներսից կազմակուծելու VІІ բանակը և կոմկուսակցությունը:

Փոքը ընդմիջումից հետո դատախաղը չարունակեց.

— Նենդ, ստոր գալաճան ու մատնիչ կի Սիդունը արդեն իսկ շատ բանով ե ոդնել յապոնական զավթողներին... Վորակեզի Սահմանամերձ շրջանի բնակչությունը և ամբողջ չինական ժողովուրդն իմանա կի Սիդունի հանցագործությունները, մենք այսոր դատում ենք նրան:

Հրապարակի բոլոր ծայրերից բարձր ծափահարություններ և բազականչություններ լսվեցին:

— Պաշտամանում ենք դատախաղի մեղադրականը:

Ամոթիմածորեն գլուխը կախած աղջիկն այժմ պետք է հանդես գալ վորպես մեղադրանքի վկա: Դա կունն եր: Նա պատմեց, թե ինչպես խաբեց և գնաց Յառոյան: Նա ասում եր, թե կի Սիդունի ամեն մի խոսքն ըստ եյության դրաբարտություն եր VІІ բանակի և կոմկուսակցության հասցեյին: Նա փորձում եր վիժեցնել հակայալոնական աղջային ճակատը: Նա ասում եր, թե զեկուեմբերի 12-ի գեպքերի ժամանակ կոմկուսակցությունը ձերբակալել ու գնդակահարել և շատ դոմինուականների, թե դոմինուանը ատում է կոմկուսակցությանը և այս:

Նրա կողքին կանգնած եր Զժանը: Այժմ հասավ նրա հերթը: Զժանը չեր կարողանում խոսել, նու հազիվ եր զըսպում իր հեկեկանքը: Քիչ հանդստանալով, նա սկսեց տալ իր ցուցմունքը.

— Յետ խարվեցի, հիմարացա... Նա ողտվեց կոլեջ մանելու իմ չերմ ցանկությունից: Նրա նպատակն ինձ հավաքադրելն եր: Նա, պարզ ե, ուղում եր ինձ յենթարկել իրեն

և ուղարկել կոլեջ կործանարար աշխատանք կատարելու համար, այնուեղ կաղըրերի պատրաստումը վիժեցնելու համար: Նա կարող եր ինձ խարբել, վորովհետեւ խորամանկ եր ու նենդ: Յերբեմն նա նման և զինվորական մասնագետաշխատողի, յերբեմն քաղաքագետի, իսկ ըստ եյության նա ստոր սրիկա յե և դավաճան: Նա կապված է Շենուի կենտրոնական մասի տեղական սրիկաների և բանդիտների հետ, նա շատ գալապաներում կապեր ունի: Նա կարողացավ Սանյուանից Վեյնան համարյա անվճար գնալ: Ամեն մի փոստային կայանում նա ծանոթներ ունի, հյուրանոցների բոլոր բոյերը նրան ճանաչում են... Ամեն անդամ, յերբ յես փորձում եյի հեռանալ նրանից, նա ասում եր ինձ. «Դու տատանվում ես, չունես հաստատուն համոզմունքներ, սիրտը մաքուր չի»: Նա շաբունակ ինձ սպառնում եր կուսակեցական տույժերով: Նա յապոնական իմպերիալիզմի հավատարիմ չունի և, չի յեղել մի որ, վոր նա չաշխատեր իր տիրոջ համար, — վերջացրեց Զժանը և ուժասպառ տեղը նստեց:

— Մեղադրյալ, ընդունում եք արդյոք այն ամենը, ինչ ցույց եք տվել նախագահական հարցաքննության ժամանակ, — հարցնում է դատարանի նախադահը կի Սիդունին:

— Ընդունում եմ:

— Ճի՞շտ և դատախաղի մեղադրանը:

— Ճիշտ ե:

— Ճի՞շտ են յերկու վկաների ցուցմունքները ձեր դամանական գործունեյության մասին:

— Ճիշտ են:

— Յե՞րբ եք մտել «Տայ-Խո» միության մեջ:

— Թե յերբ, չեմ հիշում, բայց մտել եմ:

— Անցե՞լ եք դուք հատուկ նախադատրաստություն լրտեսական գործունեյության համար:

— Այո՛, անցել եմ: Դրա մասին յես արդեն հայտնել եմ յուցմունքներում:

Դատարանի նախադահը կարդաց մեղադրյալի այն ցուցմունքները, վոր նա տվել ե նախական հետաքննության ժամանակ:

«Յես հատուկ նախապատրաստությունն եմ անցել յապո-նացիների մոտ Սիանում, ուսումնասիրել եմ դժապքեր և հատակագծեր կազմելու... ստացված նյութը անհրաժեշտ ժեպքում քիմիական յեղանակով սրահելու տեխնիկան...»

— Դուք կարողանո՞ւմ եք դժապքեր կազմել, — շարունակեց հարցաքննությունը նախադաշը:

— Կարողանում եմ: Սինչուռչենում և լուսին տաճարում յետ դժապքեր եմ կազմել:

— Ի՞նչո՞ւ համար եյթք կազմում այդ դժապքերը:

— Յապոնիա ուղարկելու համար:

— Ի՞նչպիսի կապ ունեք դուք Յապոնիայի հետ:

— Դավաճանական կապ:

— Ի՞նչքան փող եյթք ստանում ամսական:

— Յերեք հարյուր դոլար:

— Ի՞նչո՞ւ դուք VIII բանակի և կոմկուսակցության անունով խարել եք այս յերկու աղջիկներին:

— Յես ուղեցի դավաճանական աշխատանքի մեջ ներդրավել նրանց:

Բազմահազար ամբոխը, լսելով դավաճանի անսքող, անամոթ խոստովանությունները, հուզվեց: Հրապարակի բոլոր կողմերից անեծքներ լսեցին: Ժողովուրդը կտորեկտոր կաներ դավաճանին, յեթե հարդանք չտածեր դեպի դատարանը:

Դատարանի նախադաշը շարունակեց հարցաքննությունը: Կի Սիդունը ամեն ինչ խոստովանեց:

— Ընկերներ և հայրենակիցներ, — բացականչեց Զինվորական ակադեմիայի ներկայացուցիչը, — հակայապոնական ժողովրդական գինվորա-քաղաքական ակադեմիայի յերկու հազար վեց հարյուր ուսանողների և դաստուների անուննեց յետ հայտարարում եմ հետեւյալը.

Առաջին, դավաճան կի Սիդունի հանցագործություններն ապացուցված են: Մենք պահանջում ենք զնդակահարել նրան: (Բուռն ծափահարություններ): Յերկրորդ, հրահանգի համաձայն, դավաճանի գույքը պետք է կոնֆիսկացիայի յենթարկվի: Յերրորդ, այս դատավարության մասին ինքորմացիա տալ ամբողջ յերկրին, ամբողջ աշխար-

դին: Չորրորդ, մենք պահանջում ենք դեբադույն առաջնորդ Զան կայ-շից և ամբողջ յերկրի կառավարական մարմիններից՝ ուժեղացնել պայքարն ընդունեմ գալաճաների:

Բուռն ծափահարությունների տակ հռետորն իջակ ամբոնից:

Վոչ-բարձրահասակ մի կին՝ կանանց ասոցիացիայի ներկայացուցիչը, ամբոն բարձրացավ:

— Կի Սիդունը յապոնական գիշատիչների հավատարիմ շունն ե, մեր յերկրի բոլոր կանանց մահացու թշնամին ե: Զին ժողովուրդը չի ուզում իր միջավայրում այսպիսի անձնավորություն հանդուրժել, և նրա նախահայրեն ել չելին ուղենա այսպիսի սերունդ ունենալ: Յես միանում եմ նախորդ հռետորի կարծիքին և պահանջում եմ զնդակահարել: Միաժամանակ յես կոչ եմ անում բոլոր կանանց, վոր նրանք բարձրացնեն իրենց քաղաքական զգոնությունը, թույլ չտան, վոր իրենց խարեն մեր հայրենիքի ստոր թըշնամիները:

Հնդամենը յերւոյթ ունեցան վեց հռետոր: Բոլորը պահանջեցին զնդակահարել: Յերդիյալ ատենակալը կարդաց Ազգային ավանդաբարդի ջոկատների շտարի, Ազգային ավանդաբարդի Յանյանի տեղական ջոկատի նամակները, վորոնք նույնական պահանջում ենին զնդակահարել դավաճանին:

Հարցաքննությունից հետո դատական ատենակալները հեռացան խորհրդակցելու: Յերբ նիստը վերսկավեց, դատարանը հրապարակեց դատավճիւռ՝ զնդակահարել, վորն ընդունվեց յերկարատև ծափահարություններով:

Հանցագործին տարան: Արդեն մթնել եք: Սակայն ութ հազար մարդ մնում եք հրապարակում: Դատական նիստը վերածվեց միտինդի: Հռետորները խոսում եյին յապոնական լրտեսների դավաճանական աշխատանքի մասին, ասացին, թե անհրաժեշտ ե բարձրացնել ամբողջ ժողովրդի զգոնությունը, ոգնությունը ցույց տալ կառավարության և բանակի մարմիններին՝ ժողովրդի թշնամիներին յերևան բերելու և տրմատախիլ անելու զործում: Շուտով ներկայացավ զինվորականի համազգեստով մեկը և ժողովականներին հաղորդեց, թե յապոնական լրտես կի Սիդունի նկատ-

մամբ դաստիվ ճիռն ի կատար և ածված։ Հրազդարակը թշն-
դաց բուռն ծափահարությունից։ Ժողովուրդն սկսեց ցրվել
հայրենասիրական յերկեր յերդելով։

ՆՎԵՐԻ



առիտը հատեց գետի բարակ կապույտ
դիմք և կանդ առավ այնտեղ, վորտեղ
սկին եր տալիս բլրակների դարչնա-
դույն դիմք։

Լեյտենանտը աչքը բարձրացրեց քարտեզից և նայեց
շոֆերին։

— Այստեղ առանձնապես զբույշ յեղեք։ Այս շրջանում
պարտիզանների զգալի ուժեր են կենարոնացած։ Այս ժայռի
մոտ դուք դեպի ձախ շուռ կղաք—առաց նա։

— Հսում եմ, պարոն լեյտենանտ, —պատասխանեց շո-
ֆերը։

Լեյտենանտը հայացքը հառեց շոֆերի յերիտասարդ,
համարյա պատանեկական յերեսին։

— Հիշեցեք, դուք ստացել եք հատուկ կարևորություն
ունեցող առաջարանք՝ փամփուշտ հասցնել մեր մի զորա-
մասին, վոր մեծ հեռավորության վրա յե դժոնլում, բայց
մենք հավատացած ենք, վոր դուք կկատարեք ձեր պարտքը
կայսեր հանդեպ։

Նավթի լավտերի աղոտ լույսի տակ նա չեր կարող
տեսնել շոֆերի դեմքի արտահայտությունը, բայց տված

¹ Այս գեղքը պատմել է Զինաստանի կոմկուսակցության ներկայա-
ցուցիչ ընկեր Վան Մինը Կոմունիստական Բնակենացինալի ՎII Համաշ-
խարհային կոնքեսում։

պատասխանը, ինչպես թվաց լեյտենանտին, բավականա-
չափ հաստատուն եր հնչում։

— Յես կկատարեմ իմ պարտքը, պարոն լեյտենանտ։

— Կարող եք դնալ։

Շոֆերը գարձավ և լավ վարժեցված դիմուրի հաստա-
տուն քայլվածքնի ուղղվեց դեսի դուռը։

Այդ պատանին, վորն անցյալում ինչ-վոր կասկածելի
պատմություն և ունեցել այն ժամանակները, յերբ աշխա-
տում եր «Տոկիո—Ցոկոհամա» ալտորուսային ընկերության
մեջ, լեյտենանտի աշալուրջ հսկողության տակ ձեռք եր
քերել «մանջուրական հերոսի» համար բոլոր անհրաժեշտ
հատկությունները, և թվում եր, թե կենդանի ապացույցն
եր հետեւյալ փորմուլայի «Բանակը վերածնում և սամուրա-
յական վողին»։

Լեյտենանտը դոհ ժպաց։



Մեքենան, ցնցվելով, ծանր սողում եր անհարթ խորդ-
ութորդ ճանապարհով։ Շոֆերը լարված նայում եր հեռուն։

Յերկինքը մթնում եր։ Վերջալույսի բարակ կարմրա-
գույն շերտը մարեց։ Յեղենիները մութ պատի պես սկին
եյին տալիս ճանապարհի յերկարությամբ։ Ճանապարհը
մեկ յերեսում եր սպիտակավուն վոլորուն ժապավենի ձեռվ,
մեկ ել կորչում եր ժայռերի լաբիրինթոսի մեջ։

Շոֆերը վստահորեն վարում եր մեքենան։ Համարյա
մեկ տարի նա թափառում եր այս խիստ դժվարին մանջու-
րական ճանապարհներով, և նրա աչքերը բացառիկ սրատե-
սություն, իսկ ձեռքը—հաստատունություն և վստահու-
թյուն եյին ձեռք բերել։

Բայց այս ճանապարհը բացառիկ դժվարություն ուներ։
Շոֆերը հանեց քարտեզը, վերջալույսի աղոտ լույսի տակ
գծերը և ներկերը խամրած եյին, և նա հաղիս եր ջոկում
դրանք։ Նա վառեց ելեկտրական լապտերը, և յերբ լույսի
սպիտակ շրջանն ընկած քարտեզի վրա, պարզ ջոկվեց այն
նշանը, վոր արված եր պարոն լեյտենանտի մատիտով։

«Այստեղ պարտիզանների գդալի ուժեր են կենարոնացած: Այս ժայռի մոտ դուք աջ չուռ կդաբ...» Ճիշտ այսպիս ասաց լեյտենանտը:

Շոփերը բարված նայեց ոստական քարտեզի սարդոստայնին, և հանկարծ հաղիս նկատելի մի ժպիտ անցավ նրա շրթումքների վրայով:

«Յես կկատարեմ իմ պարտքը, պարոն լեյտենանտ»: Նա իրեն գցեց նստատեղի վրա և կտրուկ, վստահ շարժումով շուռ տվեց դեպի ձախ: Մեքենան ցնցվեց եր ամբողջ մասսիվ մաքմով և վերև բարձրացավ:



... Յերկնքի ծայրը լուսավորվեց: Ուշը լոյլեց վշասինեների և լուսաղեմի խոնավության բույրով: Շոփերի կոպերը կարմրել ելին բարվածությունից: Ժամանակ առ ժամանակ նա կանգնեցնում եր մեքենան, դուրս եր գալիս կարինից և ուշադրությամբ վնասով եր շրջակայքը: Արշալույսի աղոտ լույսի տակ, քարտեզի վրա արված նշանը պարզ տեսնիւմ եր նաև առանց լապտերի: Բայց ճանապարհն անսպասելի վոլորաներ եր անում...

Շոփերն ամելի ու ամելի հաճախ եր հանում քարտեզը և նայում գծաղրի բարակ զծերին: Յերենմն նրան թվում եր, թե նա բաց ե արել այդ խճճված անիծյալ կծիկը, բայց մի նոր վոլորան, և նա տեսնում եր, վոր դարձյալ սխալմում ե:

Հանկարծ անտառը կարծես թե հետ քաշվեց: Շոփերը կտրուկ կանգնեցրեց մեքենան: Նրա ժամացույցի ցիֆերվատի վրա պարզ յերեացող սլաքը ցույց եր տալիս հինգը:

Նա դուրս յեկավ մեքենայից և միքանի քայլ արալ: Ներքեւում խորը հոգիս կար: Առավոտին բարակ մշուշը թեթև սպիտակավուն պարուրով պատել եր հեռուն, մոտակա լանջերին սև կետերով յերեսում ելին դյուլերի խրճիթները: Շուրջը խորը լուռթյուն եր տիրում: Շոփերը ձեռքը ճակատը տարավ, նրա գեմքը սպրզնեց: Մոլորվել եմ... Այժմ արդեն նա չեր կարող կառածել դրանում: Նա լոռ լոռթյունը սրեց: Լոռթյունը: Նրան թվաց, թե լուս ե,

ինչպես ե արյունը խվառմ քունքերում: Յեվ հանկարծ նա կրակոց լսեց: Կրակոցը պատռեց լոռթյունը և բլուրներն արձականդեցին նրան:

Շոփերը ցնցվեց և հետ քաշվեց: Մեկ, յերկու, յերեք: Կրակոցները մոռենում ելին: Այժմ արդեն պարզուռոչ լովում եր յապոնական պնդացրի բնորոշ տկտկացը: Շոփերը շուռ յեկավ և գնաց դեպի մեքենան: Նստելով դեկի առաջ՝ նա փակեց դուռը և հանեց բլոկնուրը: Մատիտը մի քիչ գողղողուրում եր նրա մատների մեջ: Ժամանակ առ ժամանակ շովնը բարձրացնում եր դլուխը և ականջ եր դնում: Վերջապես նա վերջացրեց և խնամքով ծալեց փոքրիկ թերթիկները...

Տաք գոլորչին բարձրանում եր գետնից: Կարինի ասլակին ծածկված եր առավոտյան ցողի փայլուն կաթիլներով: Սրեղակի առաջին ճառագայթը սողաց յեղենիների կատարներով: Շոփերը ձեռքը մեկնեց և արձակեց ատրճանակի բունը...



Յապոնացիների հարձակումը հետ մղվեց: Մի խոսքը պարափաններ սարն ելին բարձրանում: Մարդիկ հոգնել ելին անքուն զիշեր անցկացնելուց: Առավոտյան քամին զովացրեց նրանց բորբոքված քրատիւքով ծածկված յերեսները: Պարտիզանները դանդաղ ելին շարժվում, ուշադրությամբ նայելով այս ու այն կողմ: Հանկարծ առաջից պնացող պատանին նախարդուշական նշան արավ: Պարտիզաններն իրենց դցեցին թիուաների մեջ: Յերիտասարդ պարտիզանի սիրտն ակաց արագ բարախել: Նա ականջ եր դնում: Լոռթյունը: Մինչդեռ նա հենց նոր պարզ կերպով յապոնական ուազմական մի մեքենա տեսավ իրենից միքանի մետրի վրա... Նա չհամբերեց և ճյուղերը զես ու դեն տալով նայեց: Նրա կարմրաթուշ յերիտասարդ գեմքը հետաքրություն և խիզախություն եր արտահայտում:

—Զգո՞ւյշ, —ո՞ւր այդպես... —ընկերը բռնեց նրա թեկից:

Բայց յերիտասարդ պարտիզանը հեց նրան և ցատկեց լոռթյունը պատահարչի վրա: Նա մի անգամից տեսավ մեքենան:

Դա կանգնած եր ճանապարհին լայնակի, մի քիչ թիքված։
Պարզ եր, վոր մեքնան ծանը եր բեռնված։

Յերիտասարդ պարտիզանն զգույշ առաջ եր գնում
առավոտվաց ցողով թրջված, լործուն փշատերևների վրա-
յով։ Պարտիզանները թիերի միջից հետևում եյին համար-
ձակ յերիտասարդի յուրաքանչյուր շարժման։

— Հետեւեցե՛ք ինձ, —հանկարծ ցածրաձայն հրամայեց
հրամանատարը։

Պարտիզանները ճանապարհ դուրս յեկան։ Հրացանները
հորիզոնաբար բռնած նրանք մոտեցան մեքնային։ Յերի-
տասարդ պարտիզանն առաջինը տեսավ շոփերին և լուս
ցույց տվեց ընկերներին կարինը։ Պարտիզանները պառկեցին
գետնին։ Նրանք սողում եյին անձայն, շունչը հետ պահած։
Յերիտասարդ պարտիզանը աչքը չեր հեռացնում շոփերի
բաց դույնի ծոծրակի շերտից, վոր յերեսում եր նրա շինե-
լի մուղ ոճիքից վերև։ Շոփերը չեր շարժմում։ Համարձակ
պարտիզանը զգուշությամբ մոտեցավ կարինին, քիչ բարձ-
րացավ և ներս նայեց քրոնած ապակուց։ Շոփերը, յերեւ,
նիբռնել ե։

— Կենդանի վերցնել, —շշնջաց յերիտասարդ պարտիզա-
նը դառնալով ընկերներին, և բաց արակ կարինի դունակը։

— Անձնատուր յեղի՛ր, —բացականչեց նա։

Սակայն նույն բոպեյին հետ քաշվեց և վայր թողեց
հրացանը։ Շոփերը նստած եր, մեջքը նստատեղին տված,
դղութը տարորինակ չուռ տված։ Նրա քունքի վրա սեին եր
տալիս վերքը։



Պարտիզանները մարմինը դրեցին խուսի վրա։ Այդ մահն
անհասկանալի և տարորինակ եր, և մարդիկ տուազնապով
նայում եյին յերիտասարդ սառած դեմքին, կարմրասե վեր-
քին՝ կապտավուն քունքի վրա։

Հրամանատարը կուցավ, վոր խուզարկի մեռածին։

Նրա ուշադրությունը դրավեց խնամքով ծալված թղթե-
փոքր թերթը։ Դա նամակ եր, յապոներեն գրած։ Հրամա-
նատարն արագ աչքի անցկացրեց դա։

— Նամակը հասցեագրված ե մեղ, լնկերնե՛ր, —ասաց
նա, բարձրացնելով հուզված դեմքը։ Յես պետք ե թարգ-
մանեմ ձեղ։

Պարտիզանները շրջապատեցին հրամանատարին։

«Հակայապոնական ժողովրդական բանակի և հակայա-
պոնական պարտիզանական բոլոր ջոկատների թանգաղին
ընկերնե՛ր . . . — հնչեց հրամանատարի ձայնը առավոտակա-
մաքուր ողի մեջ։ Յես ուղարկեցի ձեղ փոքրիկ նվեր՝ վաթ-
ուուն հազար փամփուշտ և ձեռքի շատ նոնակ ու ոումբ։
Յես կցանկանայի անձամբ խոսել ձեղ հետ այն անսահման
սիրո, համերաշխության զգացմունքի և հարդանքի մասին,
վորով սողորված և Յապոնիայի կոմկուսակցությունը և
յապոնական աշխատավոր ժողովուրդը ձեր, ազգային հե-
րոսներիդ նկատմամբ, այն ամենի նկատմամբ, ինչ մոտիկ
և մեկ և սիրելի՝ չինական ժողովորդի ու Չինաստանի փա-
ռապանծ յեղբայրական կոմկուսակցության նկատմամբ, վո-
րը մեղ հետ միասին պայքարում և յապոնական իմպերիա-
լիստական գիշատիչների դեմ . . . »

Պարտիզաններն ամելի մոտիկ յեկան։ Նրանց դեմքերը
լարված և խիստ եյին։ Հրամանատարը շարունակեց։

« . . . Յես ձեղ յերկար սպասեցի, բայց դուք չերեացիք։
Յես արդեն լսում եյի մոտեցող յապոնական գորքերի կրա-
կոցները։ Ի՞նչ կարող եյի անել այդպիսի վիճակում։ Վերա-
գանալ յապոնական զորքերի մեջ յեմ ուղում և չեմ ել
կարող։ Յես վորոշեցի անձնատպան լինել և թողնել ձեղ այս
փոքրիկ նվերը։ Բայց չզիտեմ, կստանա՞ք արդյոք դուք
այդ։ Յանկամ, վոր դուք ստանաք։ Պինդ սեղմում եմ
ձեր ձեռքը։ Բնկերական բարեներով։ Յեր յապոնացի ըն-
կերկոմունիստներից մեկը»։

Խորը լուսիթյան մեջ պարտիզանները գլուխները բաց
արեն։



Զգույշ, ինչպես իրենց սիրելի յեղբորը, պարտիզաննե-
րը գերեզման իջեցրին յապոնական աշխատավորների լա-
րը գերեզման իջեցրին յապոնական աշխատավորների լա-

վաղույն դավակի, չինական ժողովրդի հավատարիմ բարե-
կամի մարմինը:

Հրամանատարը խոնարհեց դրոշը: Նա փայլվեց արևի
տակ, վորպես կրակէ լեզու, և տարածվեց գերեզմանի վրա:

ԳՆԴԱՊԵՏԻ ԴՈՅԹԻ ԾՐԱԳԻՐԸ



ոկատը դանդաղ առաջ եր շարժվում դեպի
ձյունով ծածկված քաղաքը:

Յուրաքանչյուր սաստկանում եր: Գետինը
զբնում եր հոգնած ձիերի սմբակների տակ:
Գնդապետ իդոն ձեռնոց հազած ձեռքը ավելի ու ավել-
ի հաճախ տանում եր դեպի կապտած, ցրտահար այտերը,
բայց մանջուրական թունդ յուրան անդամ չեր կարող
փչացնել նրա շատ լավ տրամադրությունը:

Գնդապետն ըստ յերկութին լիակատար հիմք ուներ
գոհ լինելու: Յերեսուն հազար յապոնացի Մանջուրիա վե-
րաբնակեցնելու նրա ծրագրին սանկցիա յեր տվել ինքը կայ-
րաբնակեցնելու այն: Ճիշտ և, առաջին փորձը
որը, և արգեն իրագործվում է այն: Ճիշտ և, առաջին փորձը
չեր կարելի հաջող համարել—հինգ հարյուր յապոնական վե-
չեր անդամ անդամար յենթարկվում ելին պարտիզանա-
րաբնակիչներ անդամար յենթարկվում ելին պարտիզանա-
րաբնակիչների հարձակումներին և, վերջապես, ստիպված
կան ջոկատների հարձակումներին և, վերջապես, ստիպված
յեղան քաղաք վերադառնալ: Բայց այժմ գնդապետն ինքը
ձեռնամուխ յեղակ իր ծրագրի իրագործմանը և հայտա-
ցած եր, վոր դա հաջողություն կունենա:

Զոկատը մոտենում եր քաղաքի դարպասներին: Ճանա-
պարհի յերկարությամբ վորպես պատվավոր պահակ ան-
շարժ շարվել ելին Մանջուրոյի զինվորները:

Նվազախումբը թնդացրեց հիմնը: Մուշտակե խալաթի
վեշերի մեջ խճճվելով, դարպասից գնդապետին ընդառաջ
վագեց դավառապետը: Նրա ուռած գեմքը տափակացավ

ստորաքարչ ժպտից: Պետի հետեւց շտագում եր չոր,
ձգված յապոնական խորհրդականը: Տեսնելով գնդապետին,
դավառապետն ինսուն աստիճան անկյուն կազմելով խո-
նարհվեց և անշարժ մնաց:

Մանջուրոյի զինվորները վեր բարձրացրին հրացաննե-
րը, վողջունելով գնդապետին: Գնդապետը բարեհաճորեն
գլխով արակ դավառապետին և շարժվեց քաղաքի փողոց-
ներով:

Դրոշակներով զարդարված յամինի¹ մոտ նա կանգ
առավ: Այդտեղ նրան հանդիսավոր ճաշ եր տրվելու:

Ճաշն աչքի յեր ընկնում առատությամբ ու խորտիկների
ջոկովլությամբ, և գնդապետը դրանց բոլորից ել ճաշակեց:
Վերջապես, հանդիսավոր ճաշեր փոխանակելուց հետո,
գնդապետը ծանրորեն բարձրացավ և խոսեց կոտրտված չի-
նարենով: Նրա ճարգ կարճ, բայց բազմանշանակ եր.

— Մոտենում է նոր տարին, բոլոր գյուղացիները պար-
տավոր են մինչեւ նոր տարի հանձնել նախ իրենց մոտ յեղած
բոլոր զենքերը և ատա՝ հողի ովտագործման իրավունքի բո-
լոր փաստաթղթերը:



Մենյակը բռնել ելին ովիտումի ծխի կապույտ ալիք-
ները: Գավառապետը գոհունակությամբ ձգվել եր մահճա-
կալի վրա: Այն բռնելին, յերբ ովիտումն արդեն սկսել եր
հերդործել, զուտը բացվեց, և սենյակ մտավ յապոնական
խորհրդականը: Վերջինս բարեկեց, ապա նստեց և ասաց
գործարար տոնով:

— Դուք յերեկի դիմեք, վոր ճեր գյուղացիներն այն-
քան ել սիրով չեն հանձնում իրենց հողի ովտագործման իրա-
վունքի փաստաթղթերը, նույնական և տրամադրի չեն իրենց
մոտ թագցրած զենքը վերադառնելու, դրա համար ել յե-
խորհուրդ տվի գնդապետին, վոր նա ինքն ուղարկի գյուղ:
Բայց գնդապետը միջոցների կարիք ունի, նրան անհրաժեշտ
է մթերք և վող, զուրք պետք և մտակարարեք նրան այն
ամենը, ինչ անհրաժեշտ է:

¹ Յամին—չինարեն՝ կառավարողի աթոռանիստը:

— Վո՞լքան, —անվստահորեն հարցրեց դավառապետը:
— Տասը հազար դոլար:
Գավառապետը զլիով համաձայնության նշան արավ:
Խորհրդականը վլոտքի յելավ:
Գավառապետը հրամայեց կանչել քարտուղարին:

— Այսոր հենց կանչել քաղաքի բոլոր խանութատերերին և դնել նրանց վրա . . . գավառապետը մի պահ մտածմունքի մեջ ընկապէ . . . և դնել նրանց վրա տասներկու հազար դոլար «արտակարդ հարկ բանդիտներին վոչնչացնելու համար», —ասաց նա:

Քարտուղարը գլուխ տվեց և դուրս յեկավ:
Այդ ժամանակ սենյակում գտնվող մի կին զարմացած նայեց գավառապետի վրա:

— Տասներկու հազար —հարցրեց նա:
Գավառապետը ծիծաղեց:
— Այ դու անխե՛լք, մի՛թե կարծում ես, վոր յես ձրիարար պիտի գլուխս տրաքացնե՛մ, —ասաց նա, խփելով կնոջ ուսին:



Գնդապետն ուշացավ քաղաքում: Հետեյալ առավոտյան յապոնական յերեսուն զինվորի և Մանջուկոյի մի վաշտի ուղեկցությամբ նա ուղեսորդեց մոտակա առևտրական դյուզը:

Գավառի ամենաաշխույժ առևտուր ունեցող կենտրոններից մեկն եր այդ գյուղը, բայց այժմ փողոցներում լուսաթյուն եր տիրում: Գնդապետին հանդիպում եյին գյուղացիների առանձին գեմքեր միայն, վորոնք շտապում եյին ծածկել խրճիթներում: Փողոցի մեջտեղում բարձրանում եր մեծ տաճարը: Ինչպես և քաղաքում յամինի վրա, այս տեղ ել տաճարի վրա, ծածանվում եյին յապոնական և Մանջուկոյի դրոշակաները: Գնդապետն ուղղվեց վեպի տաճարը, վորտեղ մտադիր եր անցկացնել զիշերն իր շքախմբի հետ:

Կուշտ ճաշից և հանդստից հետո զնդապետը դուրս յեկավ գյուղի հետ ծանոթանալու:

Մեկ ել նրա կոպերը նեղացան և նա կանդ առավ: Նրա

ուշադրությունը դրավեց մի տուն՝ շրջապատված բարձր պարսպով, վորի ներսից յերեսում եյին ձյունով ծածկված յեղնիներ: Պարզ ե, վոր դա ունեսոր գյուղացու տուն եր: Դարպասի մոտ կանգնած եր մի աղջիկ: Մազերի յերկար վայլուն հյուսը իջել եր գոտուց ցածր: Աղջկին ուներ հաճելի, անդամ հարուստ զգեստ:

Գնդապետը հանկարծ չուզեց ճանապարհորդել իր տիրապետության նոր վայրերում և դարձավ գեպի տաճար:

Տաճար դալով, նա իր մոտ կանչեց թարգմանին և հրամայեց նրան՝ անմիջապես իր մոտ բերել այն աղջկան:



Առաստաղից կախված լամպը աղստ լուսավորում եր նախահայրերի անունները կրող աղյուսակները, սրբապատկերը, և դավաթի վրա թերզած վեյ Տոյի լոյն արևելեղ դեմքը:

Ծնոտանիքը ճաշում եր: Սեղանի մոտ գես-գեն եր ընկնում կառունիում: Նրա ճարպիկ ձեռքերը արագ կերպով բրինձ եյին լցնում դատարկված դավաթների մեջ, դինի եյին ածում ձենապակյա ըմպակների մեջ:

Հայրը և ծերունի պատը քնքչաբար նայում եյին փոքրիկ ճարպիկ անտեսուհուն:

Բնիթրիքը վերջանալու մոտ եր, յերբ դուռը բացվեց և մտալ թարգմանը:

— Դու բախտավորվեցիր . . . ասաց նա, ժպտալով բարակ խորամանեկ ըրթունքներով: Գնդապետի դուրս և յեկել քո աղջիկը: Ինձ հրամայիլած ե, վոր նրան անմիջապես տաճար տանեմ՝ զնդապետի մոտ:

Մի պահ սենյակում լուսթյուն տիրեց:
— Բայց նա տասնհինգ տարեկան և միայն, —առաջ ծերունին:

Թարգմանը քմծիծաղ տվեց:
— Վորքան ջահել, այնքան լավ, —պատասխանեց նա և ձեռքն աղջկան մեկնեց:

Կառնիում վախից ճաց:
Վեյ Տոյն առաջ յեկալ և կանգնեց թարգմանի և կառնիում այսից մեջտեղը:

— Լավ, դուք գնացեք, իսկ յես կը լանամ նրան, կհաղ-
ցընեմ, վոր արժանավայել կերպով, ներկայանա գնդապե-
տին... Յես ինքս կը բեմ նրան,—ասաց Վեյ Տուն խոպոտ:

— Լավ,—ասաց թարդմանը, մտածեց և ավելացրեց
սպառնալով.

— Միայն թե չուշանաս, իմացիր, վոր գնդապետը
Հրամայել են նրան անմիջապես բերել:



Վեյ Տուն կանդ առավ բակի մեջտեղում: Նրա վոտները
հանկարծ ծանրացան, վորպես թե հաղարավոր լի ծանապարհ
կտրած լինի: Նրան թվաց, թե ուժ չի ունենա իր տան
շեմքն անցնելու, և նա ծանրացած ընկավ նստարանի վրա:

Վեյ Տուն փակեց աչքերը... Աչա նրա առաջ ամբողջ իր
կյանքը՝ անվերջ արշավանքներ, պատահական դադարներ
գյուղերում, հյուսիս-արևելյան բանակի վաշտապետի
վտանգներով լի կյանքը:

Բայց իր տաղնապալի արշավային կյանքում ամեն աեղ,
բոլոր ծանապարհներում վեյ Տուն յերազել եր այն բոպեն,
յերբ կիերագառնա հայրենի գյուղը, ընտանիքի մոտ, և
կկարողանա իր ցեղը ծաղկման հասցնել: Նա յերազում եր,
վոր յերբեկցե իր հարգալից վորդիները վարթամ տիտ-
դոսներով կը բեն նրա անունը նախահայրերի աղյուսակի
վրա:

Կինը վախճանվել եր առանց այս յերջանիկ բոպեն տես-
նելու, բայց մնացին ծերունի հայրը, յերկու ջլապինդ վոր-
դիները և աղջիկը՝ Խունխուան:

Սկզբում վեյ Տույին թվում եր, թե նրա կյանքի յերազն
իրագործելի յե: Նա կարող ե հանդստանալ զինվորական
կյանքի ծանրություններից և տաղնապից: Բայց չուտով
տեսավ, վոր սիսալին է: Յապոնացիները հանդիսա չեյին
տալիս. նրանք կողոպտում եյին գյուղացիներին, տանում
եյին անասունը, բոնարարում եյին կանանց, գյուղացիները
սարերն եյին բարձրանում, պարտիզանական ջոկատներ եյին
կազմակերպում: Վեյ Տուն դինվորական մարդ եր: Պարտի-
զաններն այդպիսի մարդու կարիք եյին գլում և շատ ան-

գամ ոգնություն եյին խնդրել նրանից, առաջարկել եյին
պարտիզանական ջոկատի դլումն անցնել:

Բայց Վեյ Տուն համառորեն հրաժարվել եր: Եա դյու-
զում հարդանք վայելող մարդ եր, յապոնացիները ձեռք չե-
յին տալիս նրա ընտանիքին, նրա հողերին, իսկ նա ամենից
ավելի նվիրված եր իր ցեղին, իր հողին:

Այժմ յապոնացիները ներխուժում են նրա ընտանիքի մեջ,
խայտառակում են նրա ցեղը, խլում են նրա սիրասուն աղ-
ջկան՝ Խունխուային:

Վեյ Տուն ցալելու չափ սեղմեց բուռնցքները, —վո՛չ,
այդ նա չի կարող հանդուժել: Բայց ի՞նչ անել: Այստեղ,
տաճարում, դնդապետն սպասում ե նրա աղջկան:

Նա վեր կացավ և միքանի անլճուական քայլ արակ
գեղի տունը: Հանկարծ սարսափելի աղաղակն ստիլեց
նրան ցնցվել: Վեյ Տուն վազեց գեղի տուն:

Խունխուայի սենյակը կիսախալար եր, բայց նա
խկույն տեսավ աղջկան՝ նա պատկած եր հատակի վրա,
տարորինակ մեկնված, կոտրած թեկրի նմանվող իր ձեռ-
քերը լայն տարածած: Նրա կողքին ընկած եր արյունաթա-
թակ մկրատը: Վեյ Տուն խոնարհվեց աղջկա մարմնի վրա:
Նրա գեռուս մանկական վզի վրա բացված եր խորը սարսա-
փելի վերքը:

Մի պահ Վեյ Տուն հանդիսա եր, մեջքը կուցրած,
կարծես թե նրա ուսերի վրա մեծ ծանրություն կար:

«Պետք ե նախազգուշացնել ծերունուն, —հանկարծ հի-
շեց Վեյ Տուն. —նա այնքան սիրում եր թոռնիկին...»:

Վեյ Տուն անցավ հարևան սենյակը:
— Հա՛յրիկ, Հա՛յրիկ, —կամացուկ կանչեց նա, բայց
վոչ վոք պատասխան չտվեց: — Հայրի՛կ, —մի անդամ ել
կրկնեց Վեյ Տուն:

Յերբ նա կպցրեց լուցկին և թույլ բոցը լուսավորեց
սենյակը, նա տեսավ հոր մարմինը: Հենց վոր Վեյ Տուն
ձեռք տվեց մարմնին, վերջինս թեթեակի որորվեց: Պարանը
սեղմել եր կոկորդը, նրա մյուս ծայրը գցված եր առաստա-
զին խփած կեռից:

Վեյ Տուն շուռ յեկավ գեղի նախահայրերի աղյուսակ-
ները:

— Յես անարժան հաջորդ իմ, չկարողացա ողահպանել տոհմի պատիվը և նրան ծաղկման հասցնել: Բայց յես չեմ խայտառակի տոհմին. վո՞չ յես, վո՞չ ել իմ գալակիները ոտարերկրացիներին ստրուկ չեն լինի:

Յերեխաները քնած եյին... Վեյ Տուն մի պահ նայեց նրանց թույլ լուսավորված յերեսներին:



Ծաղկատար վանի աղքատ խրճիթը նեղվածք եր և ոչը հեղձուցիչ: Այլտեղ հավաքվել եյին աստամբ ջոկատների առաջնորդները: Գյուղացիների զայրույթն որեցոր աճում եր: Ճիշտ և, գնդապետը լուրեր եր տարածում, թե հողատիրական փաստաթղթերը նրան պետք են միայն կնիք խիելու համար, բայց գրան վո՞չ վոք չեր հավատում. գյուղացիները դիտեյին, վոր յազոնական վերաբնակիչները փորձեցին դրավել մանջուրական գյուղացիներին պատկանող հողերը, և պարտիզանական ջոկատների ճնշման տակ միայն թողեցին դավթված հողերը:

Լամպն աղոտ լուսավորում եր զյուղացիների դրզոված քրանած յերեսները: Անկյունում աչքի յեր զարնում գյուղական դպրոցի ուսուցչի զունատ լլար դեմքը, սեղանի առաջ հին մաշված կալույտ կոստյումով մի ուսանող արագործն տանում-բերում եր վրձինը թղթի կտորի վրայով, գործողությունների պլանը նշելով:

Ծաղկատար վանի առաջարկը՝ հանել թաղցրած դենքը և պահպանել հողը՝ գյուղացիները միաձայն ընդունեցին: Բայց Ծաղկատար վանը, ուսուցիչը և ուսանողը դիտեյին, վոր նրանց հարկավոր և մեկը, վորը լավ ծանոթ լինի ուղմական դրծին:

Յերբ ուսուցիչը տվեց վեյ Տույի անունը, Ծաղկատար վանը տարակուսանքով գլուխը շարժեց: Բայց վանը ժամանակ չունեցավ առարկելու ուսուցչին:

Դուռը բացվեց: Քամին ներս խուժեց սենյակը: Լամպի բոցը բարձրացավ և իջավ, սենյակ մտավ մի մարդ: Նրա ձեռքերը արյունոտ եյին:

— Վեյ Տու, ի՞նչ ե պատահել քեզ—կամացուկ հարցրեց Ծաղկատար վանը:

Վեյ Տուն բոլորի վրա ծանր, սենուուն հայացք զցեց:

— Յես ձեղ հետ եմ,—արտասանեց նա հաստատորեն:

— Դա շատ լավ է; Վեյ Տու,—ասաց ուրախացած վանը: —Մեղ շատ և հարկավոր այնպիսի մարդ, ինչպիսին դու յես:

Ուսուցիչը մոտեցավ վեյ Տույին և իր փափուկ ծերուկային ձեռքը գրեց այդ ամբակազմ մարզու ուսուն, վորին, հավանաբար, մեծ դժբախտություն եր պատահել:

— Դու լավ վարվեցիր, վեյ Տու,—ասաց նա կամացուկ և ավելացրեց.—բայց քո ընտանիքը, վեյ Տու:

Վեյ Տուն ցնցվեց:

— Յես այլու ընտանիք չունեմ, ուսուցիչ, —ասաց նա, բայց այժմ մտածում եմ այլ բանի մտախն՝ դանդաղել չի կարելի:



Գնդապետը զարթնեց վաստ տրամադրությամբ. դժկամորեն ըլացվեց, մի անդամ ել հայհոյեց թարգմանին, յերեք անդամ խոնարհվեց կայսեր պատկերի առաջ և հրամայեց կանչել տանուտերին:

Որը գորչ եր, ձմեռային տափնապալի ամպերը ցած եյին իջել գետնի վրա: Գնդապետը թաղցնելով ծնոտը վերարկուի մորթու տակ, գտվիթ դուրս յեկավ: Տաճարի լայն բակը լեփ-լեցուն եր մարզկանցով: Գավթի յերկու կողմերում շարքով կանգնած եյին զնդապետի ջոկատը և Մանջուղոյի զինվորները: Գավթի առաջ կանգնած եր միքանի տանուտերը: Նրանք լուս ոլուխ տվին զնդապետին: Տանուտերերի հետեւմ խոնակել եյին գյուղացիները: Նրանց գեմքերը լարված ու մոռայլ եյին:

Գնդապետը բարձրացրեց զլուխը: Դժվարությամբ խոսքեր ընտրելով և քամու զեմք լարելով ձայնը, նա սկսեց.

— Ինձ հայտնի յե, վոր գուք զենք եք թաղցրել...

Գնդապետը նախադասությունը չվերջացրեց: Հելիչե, գունատ բանքերը նրա մոտ վաղեց և պատիվ տվեց:

— Պարո՛ն գնդապետ, անտառից դալիս և բանդիտների
մի խումբ, — արտասանեց նա չնչակտուր:

Գնդապետի լիքը, ուսած դեմքը ցնցվեց: Նա հայացք
դցեց բակի վրա: Տանուտերերը դեռ հանդիսատ կանդնած
ելին, և նրանց դեմքը վոչինչ չեր արտահայտում, բայց
նրանց հետեւում գնդապետը տեսավ գյուղացիների դայրա-
ցած դեմքերը, սեղմված բոռնցքները, իսկ փողոցով շարժ-
վում եր ամբոխը...

Թուրը բոնած, գնդապետի մոտ վաղեց սպան:

— Կհրամայե՞ք կրակ բանալ, — հարցրեց նա հուզմուն-
քից բեկեկվող ձայնով:

— Հիմար, ամելի վաստ կլինի, — հանկարծ հայհոյեց
գնդապետը:

Դարպասը ճոճուաց գյուղացիների ամրապինդ մարմին-
ների ճնշումից: Գյուղացիները, սարսափելի աղաղակով,
նիղակները, հրացանները, կացիները ճոճելով բակ ներ-
խուժեցին:

Ծաղկատար վանը կավողների առաջին շարքումն եր:
Նրա հրացանակոթը լավ էր գործում:

Գյուղացիները շրջապատեցին յապոնացիներին:

— Խփիր դրանց, կապի՛ր:

Գնդապետի ուսած դեմքը կապտեց, առա թղթի պես
սպիտակեց: Գյուղացիների ամրապինդ ձեռքերը բոնեցին
նրա փափուկ մարմինը:

— Կրյա՛:

— Տեսնենք, ինչպե՞ս ես խլելու մեր հողը:

— Մեզ սպանե՞ս, մեզ թալանե՞ս, մեր աղջիկներին
բոնաբարե՞ս: Մի պահ գնդապետն իր առաջ տեսավ վեց
Տույի ատելությունից լայնացած աչքերը: Սակայն դա վեր-
ջին բանն եր, վոր նա տեսավ:

Տարիքավոր գյուղացին բարձրացրեց հրացանը և վրա
բերեց գնդապետի փոքրիկ ճարպակալած գլխին:

Հետեւյալ որն առավոտյան պարտիզանները դեպի քա-
ղաք շարժվեցին: Զոկատի առաջից ձիով գնում ելին Ծաղ-
կատար վանը և վեց Տուն: Նրանց դեմքերը խիստ ու մտա-

Հոգ Եյին: Պարզ առանձին եր: Բլուրների գագաթները արե-
գակի ճառագայթների տակ ալ դույն եյին ստացել:

ՑԱՆ ՑԶՈ-ՄԻՆԸ ԼՈՒՌ ԵՐ



ավառապետը նայեց ժամացույցին: Սլա-
քը մոտենում էր տաներկուսին:

Տանեներկուսին յամին պետք ե գային
վոստիկանապետը և առևտրական պալատի նախագահը:
Ողտվելով յասրոնական խորհրդականի հիվանդությունից,
գայլառապետը նրանց արտակարդ խորհրդակցության եր
հրավիրել «բանդիտների» դեմ կովելու համար...

Գայլառապետի լղար, յեռանդուն դեմքը մտահոգված
եր: Փառասեր, յելրոպական կրթություն ստացած և նա-
խաձեռնությունից վլուզ-գուրկ մարդ լինելով, նա յերազում
եր ժամանակակից Բառ Գունի փառքի մասին, աշխատելով
հին չինական կառավարողի հատկությունները միացնել ժա-
մանակակից գործարարության հետ:

Իր կառավարման սկզբում նա աշխատում էր նախաձեռ-
նություն հանդես բերել, ցանկանում էր բնակչության մեջ
հեղինակություն նշանակել: Սակայն չուտով անսամբլ, վոր իր
բոլոր փորձերն իգուր են:

Նա կա՛մ պետք ե զրկվեր իր պլուտից կա՛մ պետք ե խա-
ղալիք դառնար յապոնական խորհրդականի ձեռքին: Որեցոր
աճում էր բնակչության անվատահությունը դեպի նա: Իսկ
վերջին որերս նրա գրությունն առանձնապես ծանրացավ:
Յապոնացիները բնակչությունը վերջնականապես քայլայող

1Բառ Գունը—չինական լեզնագար կառավարող, իմաստուն և արդա-
բամիտ գտառալոր ե:

նորանոր սլահանջներ ելին ներկայացնում : Հակայապնամկան շարժումն ուժեղանում եր :

Արդեն միքանի որ եր, վոր քաղաքում համառ լուրեր ելին սրտում, թե պարտիզանները խաղաղ բնակիչների կերպարանքով մտել են քաղաք և զինված յելույթ են նախապարասում :

Գիշեր գավառապետը նահանդի կառավարչից նոր հրահանդ ստայավ : Հրահանդի մեջ կառավարիչը պահանջում եր ամենավճռական միջոցներ ձեռք առնել «բանդիտների» դեմ :

Յամինում լուրիցուն ե տիրում : Խօվում և ժամացույցի շխէչիրոցը միայն : Գավառապետը լուսամուտից դուրս ե նայում : Ամեն բարի կարելի յե ահեղ գեսլքեր սպասել :

Նա մըսում ու կծկվում ե : Ճին սովորույթի համաձայն, յամինի ճակատը դեպի հարավ և նայում, դավառապետը փաթաթիւն ե բամբակով խալաթի մեջ, բայց, չնայած դռան, դուրս ե լուսամուտի տակ սուլող քամու ցուրտ շունչը :

Ժամանակը ձզվում ե վորպես յերկար, անվերջ գորչ թել : Վերջապես բոյը բաց ե անում դուռը և դեկուցում ե .

— Անետրական պալատի պարոն նախագահը և պարոն վոստիկանապետը :

Գավառապետը տեղից վեր ե կենում, բայց մինչդեռ նրա շրթունքները սիրալիք ժպտի ձեւ են ընդունում, նրա գլխում արագորեն անցնում են հետեյալ մտքերը . «Ի՞նչ խորհուրդ կարող են տալ իր կողեգաները, յերբ յապոնացիների պահանջներն ավելի ու ավելի լուրից են դառնում, իսկ պարտիզաններն զոկատներն աճում են, կարծես թե հողն ի՞նքն ե աճեցնում նրանց» :

Բոյն զգուշությամբ ծածկում ե դուռը :

«Բանդիտների» դեմ սլայքարելու խորհրդակցությունն ակսվում ե :



Դեղնած տերեները խշոշալով ընկնում են չոր, ճաք-ճքած հողի վրա : Աշնանային քամին վերցնում ցրում ե նրանց բակով մեկ :

Դարպասի մոտ ժամապահները հայհոյանքներ են փոխանակում և հորանջում են ձանձրույթից :

— Ճշտն ասած՝ մեկ իզուր են պահում այս անիծյալ քամու տակ : Վո՞ր հիմարը ներկայումս կզնա արդարություն վնասելու յամինում, — մըլթմթում ե յերիտասարդ զինվորը, վոր գյուղացու ծաղկատար լայն դեմք ունի :

Տարիքալոր զինվորը չի պատասխանում — այս անիծյալ քամին կարող ե ամեն միտք գուրս քչել մարդու զիմսից :

Խչուշում են տերեները : Սուլում ե քամին : Զինվորների կոպերը կպչում են : Մեկն թվում ե, թե իր ընտանիքի մեջ ե, — տաք կանի վրա նստած են նրա կինը և յերեխաները : Կինը նրան մոտեղնում ե գավաթը, և նրան թվում ե, թե զգում ե տաք թեյի հաճելի բուրմունքը...

Յերիտասարդ զինվորը մտածում ե կնոջ տաք կանի մասին :

Հանկարծ մի զիլ և սուր ճիչ խախտեց յամինի քնկոտ խաղաղությունը :

Յերիտասարդ զինվորը վաղեց գետի դարպասը : Տարիքալորը հետեւեց նրան :

Բայց զինվորները գեռ դարպասին չհասած, բակ ներս պրծակ մի կին լալով ու վողբալով : Սև մազերը ծածկում ելին նրա դեմքը և յերկար խճճված հյուսերով թափում ելին կրծքի ու մեջքի վրա : Ճին կապույտ կոֆտան հազիկ եր պահում նրա ուսերի վրա :

Զինվորները շրջապատեցին կնոջը :

— Ո՞ւր ես խցկվում, կորի՛ր, — կոտիս բղավեց յերետասարդ զինվորը :

Բայց կինը գետին ընկավ և մըլթմթաց, արցունքներից խեղղվելով :

— Յես պետք ե տեսնեմ գավառապետին : Յես անպայման պետք ե տեսնեմ նրան — յես մեծ վիշտ ունեմ : Բանդիտները սպանեցին իմ ամուսնուն :

Յերիտասարդ զինվորը շփոթված նայում եր կնոջը :

— Ինչ եք նադիտում այդ պառնիկի հետ : Դուրս շպըրտեք նրան դարպասից, — բղավեց յերկրորդ դարպասի պառաջ կանողած ուռած դեմքով հաստ զինվորը, զլանակի մնացորդը գետին թքելով :

Յերիտասարդ ժամապահը բոնեց կնոջ ուսերից, բայց վերջինիս ձեռքերը, ծառի արմատների պես, կպան դետնին, և թվում եր, թէ վոչ մի ուժ չի կարող պոկել նրան գեանից:

Յամինի յերկորդ դարպասի մոտ կանդնած ժամապահները, վոր դիտում եյին այդ տեսարանը, քրքջացին:

— Կնկա հախից ել չեն կարողանում դալ, այս քեզ քաջեր, — ծիծաղելով բայլեց հաստ յերիտասարդը և վրա պրծամի, վոր զոռով դուրս դցի կնոջը դարպասից: Բայց այդ բոպեյին կինը բարձրացրեց զլուխը և դեն դցեց մազերը, բացվեց նրա գեմքը, և զինվորները տեսան, վոր կնոջ դեմքը սիրուն և դոքումի կորիզի պես, խակ աչքերը փայլուն են և ժիր:

Յերիտասարդ զինվորի ձեռքերը հանկարծ յերկչուու ու քնքուշ դարձան: Տարիքավորը քմծիծաղ տվեց:

Կինը վեր կացավ:

— Ի՞նչ անիւղն եք դուք, տղամարդիկի, — խղճալի կերպով ասաց նա և հանկարծ, խորամանկ ժպտալով և պապղացնելով ձյունի պես սպիտակ ատամները, ավելքշը:

— Ռւզում եք խանդարել դավառապետի հետ իմ տեսակցությունը:

Յերիտասարդ զինվորը տիմարաբար ծիծաղեց: Նրա մատները դեռ զզում եյին կանացի մարմնի ջերմությունը, և չեր ուզում բաց թողնել նրան իր ձեռքերից: Բայց տարիքավորը, վոր ժիր ու ընկած-յելածի մեկն եր, — աչքով արեց նրան:

— Վատ չի լինի միքանի բոպե այսպիսի գեղեցկուհու հետ անցկացնել — շշնջաց նա բարեկամին և, թէքիլով դեպի կինը, ասաց կամքացուկ.

— Խակ հետո կդա՞ս մեղ մոտ, լա՞վ:

Կինը ժպտաց:

— Շո՞ւտ վերադարձիր — դուռաց նրա հետեւից ալար ժամապահը:

Սակայն կինը դեռ միքանի քայլ չաբած, հաստ ժա-

մապահը, վոր կարողացել եր նկատել նրա գեղեցկությունը, բղավեց:

— Կանգնի՛ր:

Նա չարացել եր, վոր կինն իրեն չի հասնելու:

Կինն իրեն դցեց գեպի ներսի դարպասը: Հաստլիկը շնչակտուր վազեց նրա հետեւից:

Յերիտասարդ զինվորը կտրեց հաստլիկի ճանապարհը: Վերջինս ուզում եր դեն հրել նրան, բայց յերիտասարդը ուժեղ, թարս խիմեց նրա հուզմունքից կարմրած դեմքին: Մնացած ժամապահներն ողնության հասան:

Յամինի բակը լցուեց աղաղակով և թունդ հայնոյանքով:

★

Առետրական պատրի նախագահը և վոստիկանապետը, հարգանքով վլուխները խոնարհած, պատրաստվում եյին լսել հրահանդը:

Գավառապետը բաց արտի կարմիր գծիկներով տողածու հիերողիկիներով ծածկված: Թուղթը և մոտեցրեց աչքերին:

Բայց դեռ առաջին ֆրազները չկարդացած, բակից տաղ-նապալի աղաղակներ լսիցին:

— Ի՞նչ ե պատահել — յերկչու հարցրեց առետրական պալատի նախագահը:

Վոստիկանապետը վազեց գեպի պատուհանը: Գավառապետը հետեւեց նրան:

Փուլում ապահով միջով նրանք տեսան կովող զինվորներին և լաց յեղող կնոջը:

Վոստիկանապետը ձեռքը թափահարեց:

— Կինիկ ե ընկել ձեռքերը, իրար են կծոտում շների պես:

Զղային դող անցավ դավառապետի լղար դեմքով: Նա նայեց սեղանին, վորի վրա ընկած եր մի ծրար: ծրարի ձախ անկյունում քառակուսի կնիք եր դրոշմած, խակ մեջ՝ տեղում դրված եյին գավառապետի շքեղ տիտղոսները...

Նա, այդ բոլոր տիտղոսների տերը, չեր կարողանում անդամ իր յամինի բակով ամ կարդ պահպանել:

Գավառապետը ընկղմվեց բարիաթոռի մեջ և կանչեց
բոյին:

— Ի՞նչ ե պատահել, — զուաց նա խստորեն, յերբ վա-
խեցած բոյը յերեաց զաւանը:

— Այստեղ մի կին կա, — կմկմալով ասաց բոյը:
— Ի՞նչ ե ուզում նա:

— Նա ասում է, վոր այս գիշեր բանդիտները սպանել
են նրա ամուսնուն, և նա անսպայման ուզում ե տեսնել
պարոն գավառապետին:

Գավառապետը մի պահ մտածեց:

— Ասա՛, վոր ինձ մոտ թողնեն նրան:

Առևտրական պալատի նախադաշտը և վոստիկանապետը
իրար յերես նայեցին:

— Ահա՛ թե ինչ ե նշանակում յելրոպական կուլտուրա,
— վոչ առանց իրոնիայի ասաց վոստիկանապետը:

Նա միշտ նախանձում եր գավառապետի յելրոպական
շարժումներին և կրթությանը:

— Վո՛չ միայն յելրոպական կուլտուրա, — չոր առար-
կեց գավառապետը, — այլ և չինական խմասություն:

Առևտրական պալատի նախադաշտը վլխով արավ և, իր-
բամանկությամբ աչքով անելով, վնիթինթաց.

— Հասկանո՞ւմ եմ, հասկանո՞ւմ եմ: Յել մեր գործի
շահերը...

Նա կը իրի վրա հանդիսաւ գրեց հաստ կարճ մատ-
ներ ունեցող իր ձեռքերը:

★

Կինը մտավ և կանդնեց կարինետի, դուան առաջ:

Մի պահ նա կանգնած եր լուս և աչքերը հասել եր
ներկա յեղողների վրա: Սև մազերը թափված ելին գու-
նատ այտերի վրա;

— Ո՞վ եք դուք, — հարցրեց գավառապետը, — զննական
հայացք գցելով նրա վրա:

Կինը գլուխը բարձրացրեց, և նրա աչքերը հանդիսեցին
գավառապետի աչքերին:

— Յես ձեղ մոտ եմ յեկել պարտիզանների կողմից, —
հաստատուն ու վարուակի առաջ նա:

Գավառապետը դուռնատվեց: Առևտրական պալատի նա-
խադաշի ծանր մարմինը հանկարծ ցածրացավ ու աթոռի
վրայից դեպի հատակ սահեց: Վոստիկանապետը ձեռքը
դցեց ատրճանակին:

Մի պահ սենյակում լարված լուսություն տիրեց:

— Մի՛ վախեցեք, յես պարտիզան չեմ, — ասաց, վերջա-
պես, կինը, ժամադեմ նայելով առևտրական պալատի նա-
խադաշի ահաբեկված յերեսին: — Բայց... յես հակայապո-
նական ընկերության անդամ եմ...

— Կամ' ո՛ց, — վախեցած ընդհատեց նրան գավառապե-
տը, բարձրացնելով ձեռքը, և շարունակեց ականջները
սրած:

— Ի՞նչ եք ուզում մեղնից:

Կինը առաջ անցավ և նստեց սեղանի մոտ:

Նա խոսում եր հանգարտ, բայց ձայնը հնչում եր վո-
րոշակի և հստակ:

Նրանց բոլորին՝ և՛ գավառապետին, և՛ առևտրական
պալատի նախադաշին, և՛ վոստիկանապետին, պետք և
հայտնի լինի, վոր յապոնական բրոկազան անասելի ծանր
ոդայմաններ և ստեղծել պարտիզանների համար: Մոտենում
է ձմեռը... Պարտիզանական չոկատները սարերում սոսկալի
զրկանք են կրում: Ժողովուրդն ոգնում է նրանց, ինչով
կարող ե, բայց յապոնացիների կողմից քայլարձ գյու-
ղացիները վաղուց արդեն իրենք ել են սովոր մատոնված:
Պարտիզանները քնում են ղետոնի վրա, նրանց չորերից լա-
թեր են միայն մնացել, նրանք ստիպված են սնվել բույսերի
արմատներով և ծառի կեղեռվ: Բայց չնայած զբան, այ-
նուամենայնիվ նրանք համար գիմադրում են յապոնացինե-
րին: Սակայն այսուհետեւ այդպես շարունակվել չի կարող:
Պարտիզանները մթերքով ու չորով անհապաղ ողնություն
ստանալու կարիք են զգում...

— Մի խորով, վո՞լ ե հարկավոր, — վերջացրեց նա
վոտքի կանդնելով:

Գավառապետն ուշադրությամբ նայեց կնոջ գունատ,

վճռական դեմքին։ Նրա վարմունքը հարդանք ներշնչեց դա-
վառապետին։ Նա ինքն ամեն որ ստիպված եր դլուխը խո-
նարհել յապոնական խորհրդականի, գնդապետների, սպա-
ների առաջ...

Պետք եր մեծ խիզախություն ունենալ այլպիսի պա-
հանջով յամին ներկայանալու համար։

Կինն իրար մոտեցրեց իր բարակ, սարքած հոնքերը և,
վորպես թե պատասխանելով գալառապետի մտքերին, ա-
սաց։

— Յես չվախեցա ձեղ մոտ գալու։ Դուք չինացի յեք,
և յես հավատացած եմ, մոր այլք բանը չե՞ք մոռացել։

Առեւրական պալատի նախագահի չաղ դեմքին կարմիր
բժիր յերեացին։ Վոստիկանապետը ջղայնորեն արորում եր
կիսատ սիլարենը։

— Ի՞նչ եք լոել, — քմծիծաղ տվեց կինը։ Յես, չնչին
կինս, չեմ կարող հաշտովել յապոնական բռնադատների հետ,
իսկ դուք՝ ուժեղ տղամարդիկդ, վախենո՞ւմ եք։

Գավառապետը ցնցվեց։ Կինը կանդնած եր նրա առաջ,
ուղիղ նայելով նրա աչքերին և պատասխան սպասելով։ Իսկ
կնոջ հետեւում կապտին եյին տալիս հեռալոր ըլուրները,
ուիին եյին տալիս անտառները։ Հրդեհների ծուխը փոփել եր
գետնի վրա, ճանապարհներին թափառում եյին սովոր ու
հուսահատությունից խելակորույս կանայք ու յերեխաներ։

Մի պահ սենյակում լուսիթյուն տիրեց։

Ապա զավառապետը թեքվեց զեսլի վոստիկանապետը և
ինչ-վոր շնչաց նրա ականջին։ Վոստիկանապետը դեն ցցեց
սկզարեւը, պատյանից հանեց ատրճանակը և վեր կացավ։
Թեթեացման հառաջ դուրս թուալ առեւրական պալատի
նախագահի կրծքից։ Այժմ այս խելակորույս կնոջը կսպա-
նեն, ինքը ստիպված չի լինի մասնակցելու այս վտանգավոր
դորձին... և իր քսանկից փող չի վճարի...

Վոստիկանապետը գնաց զեսլի դուռը, կտրուկ շարժու-
մով բաց արեց և նայեց միջանցքը։

— Ավելորդ ականջները չկան, — ասաց նա հանդարտ, մի-
բաղանալով դեսլի սեղանը։

Գավառապետը դմսով արտով և դարձավ դեսլի կինը։

— Նստեցե՛ք, մենք ձեզ լսում ենք, — ասաց նա դործա-
բար տոնով։

— Յես ավելացնելու վոչինչ չունեմ այն բանին, ինչ
ալովեն ասացի ձեղ, — պատասխանեց կինը։ Մեղ հարկալոր
և Յ հաղար դայան։

Գավառապետը հանկարծ մի կողմ շպրտեց հրահանդը։

— Գրողի ծոցը գնա յապոնական այս խորպանքը, —
ասաց նա և, դառնալով կնոջը, ավելացրեց վճռականորեն։

— Դուք չեք միսարվել. մենք չինացի՛ յենք։

— Բայց մենք բոլորս մեր կյանքով կտուժենք, յեթե
մեզ վրա կասկածի ստիե՛ր անդամ ընկնի գունադաշտ
շրթունքներով ասաց առեւրական պալատի նախագահը։

Կինն ուղղվեց և հաստատակամորեն պատասխանեց։

— Յես խոստանում եմ լոե՛լ։



Ծուխը բամբակի սպիտակ վամփուկ մալանչների պես
մուլում եր գետնի վրա։ Զյունը հաղվաղեղ հաճախորդնե-
րի վոտքի տակ ճոճուում եր։ Գյուղի փողոցներով դանողակ
առաջ եր շարժվում ծանր բեռնաված մի սայլ։ Բատրակի շո-
րերով մի պատանի քշում եր հողնած ձիերին։ Սայլի կող-
քով գնում եր տաք, բամբակով խալաթ հաղած մի ջահել
կին։ Նրա զվարի կապոցը, վոր ըստ յերեսութին յերեսը
ցրտից պահպանելու համար եր, ցած եր քաշված աչքերի
վրա։ Կինը, ժպատակով կապոցի տակից, ու, ժիր աչքերով
նայում եր անցորդների վրա։

Նա պատանուն պատիիրեց դեսլի աջ քշել, վորտեղ յեր-
կար ու ժապավենի պես ձգված եր ճանապարհը։

— Մենք այսոր նոր ճանապարհով կգնանք։ Յերբորդ
անդամ հին ճանապարհով գնալը վտանգավոր ե։

Սայլը գյուղից դուրս յեկալ։

Կանդնի՛ր, — յապոներեն լալեց հանկարծ մի խիստ
ձայն։

Բայց բատրակը շարունակում եր քշել ձիերին։

— Կանդնե՞ր, բարձաւ, — Հայհոյեց յապոնացին, մոտ
վաղելով սայլին:

Պատանին կանդ առավ և, վորպես թե չի հասկանում
յապոնացւն, զլուխը կողքի թեքելով, զարմացած նայում
էր նրան:

Յապոնացին զարձակ դեպի հետ:

— Ի՞նչ եք բերանեաց կանգնել, — բավկաց նա Մանջու-
ռոյի զինվորների վրա, վոր կանգնած եյին վոչ հեռու և
անտարեր հետեւում եյին, թե ինչ և կատարվում:

Մանջուրական զինվորները մոտեցան:

— Ո՞ւր ես դուռմ և ի՞նչ ես տանում, — հարցրեց կնոջը
մանջուրական զինվորը:

Յապոնացին բարձրացրեց յուղոտած ծածկոցը, վոր
զցված էր սայլի բեռան վրա, և մանրազնին շոշափեց պար-
կերը:

Կինը ճակատի վրայից հետ տվեց կապոցը և ժպտաց:

— Տուն եմ¹ զնում, հարսանիքի՛, մե՛ծ հարսանիք կիբ-
նի, — պատասխանեց նա, — ուղղակի նայելով զինվորի աչքե-
րի մեջ:

Զինվորը քմծիծաղ տվեց: Կինը, թվում էր, թե ճիշտ
և ասում:

— Քշի՛ր, — ճեռքով նշան տվեց նա բատրակին:

Բատրակը մտրակեց ձիերին, բայց այդ վայրկյանին
յապոնացին բղավեց.

— Յետ դարձրո՞ւ:

Կինը վորրաց:

Յապոնացին խիեց պատանուն հրացանակոթով և հրա-
մայեց հետ զարձնել սայլն ու քշել դեպի պահակային
պոստը:

— Ուրեմն դու պնդում ես, վոր մին ու ալյուրը ճոխ
հարսանիքի համա՞ր են, — պատասխանեց կինը:

— Հարսանիքի՛ համար ե, — պատասխանեց կինը:

— Իսկ քեզ մոտ դտնված վողե՞րը, Յ հայար դայա՞նը,
նույնպե՞ս:

Կինը զլխով դրական չարժում արավ:

Ակնացի ապակու միջով յապոնացու աչքերը նայում
եյին համաստրեն և չարությամբ:

— Վե՛րջ տուր այլ ոյինքաղովթյանը: Մեղ հայտնի յի,
վոր այս մթերքները և վողը տանում ես բանդիստներին:
Բայց մենք ցանկանում ենք իմանալ այս բոլորը նվիրողնե-
րի անունները:

Կինը լուռ եր:

Սպայի այտերը շառագունեցին:

— Մենք կստիպի՛նք, և քո լեզուն կրացվի: Տուր անուն-
նե՞րը, տուր անուննե՞րը:

Յապոնացին հետ տարավ ձեռքը և խիեց կնոջ յերեսին:
Կնոջ աչքերի տուած սեացավ, նրան թվաց, թե հողը
դուրս և զալիս նրա վոտքերի տակից: Նա լսեց իր զմի
վերեւում բամբուկի ճիպոտների սուլոցը և խիստ ցավ
զգաց...

— Վե՛ր կաց: Մեկի ձեռքերը խրվեցին նրա արյունաշա-
ղախ ուսերի մեջ: Նա վեր կացավ: Մշուշի մեջ նրա աչ-
քերի տուած յերեսց սպայի ծաղրող զեմքը:

— Դեհ, կավայ ոննամ, լեզուդ չե՞ս բաց անի վերջա-
պես, — հարցրեց սովան, աչքերը կկոցելով: — Ես կարծում
եմ, չարժե վոր այսպիսի ջահել և դեղեցիկ կինը մեռնի
ի սեր ինչ-վոր կեզառա բանդիստների:

Սովան քաշեց սիզարեալը:

— Իբա՞վ, յեթե զու յապոնուհի լինելիք, կարող եյիր
դյութիչ պելչա լինել, թերեւ, նույնիսկ Տոկիոյում... Նա
մի պահ խորասուզեց այնքան հեռու մնացած որերի հե-
շողությունների մեջ:

— Դեհ, լինչպի՞ս ուրեմն, — նա վեր կացավ: — Մեկ,
յերկու անուն, և յես քեզ բաց կթողնեմ:

Կինը լուռ եր:

Սպայի աչքերը սպասողական հայացքով նայում եյին
կնոջ վրա: Սպայի համար պարզ եր, վոր նրանից կարող եր
իմանալ մանջուրական աղմինիստրացիայի վերնախավին
պատականող միքանի ահծերի հակայապոնական տրամա-

¹ Բագայ կամ բագայարու—յապոնական հայհայնը:

դրությունների մասին։ Բայց ինչպէ՞ս ստիպել, վոր խոսի
այս կամակոր կինը։

— Հարյուր հարված, — բղավեց յապոնացին։

Կտորանքները շարօնակվում եյին գիշեր-ցերեկ։ Կնոջ
լոռությունից դաղաղած սրան հրամայեց ամենանուրբ տան-
ջանքները տալ նրան։ — Նրա կուրծքը դայլիկոննեցին խոզա-
նով, — յեղուղների տակ խրեցին պողպատե ասեղներ։

Կինը լուռ եր։

Առավոտյան նա դժվարությամբ բաց արավ արյունոտ-
ված, ուռած կողերը և իր կողքին տեսավ ընկերոջը՝ Լյու
Դենյուանին։

Նա քիչ բարձրացավ և շարժեց պապակված շրթունք-
ները։

Յապոնացին ծիծաղեց։

— Վաղուց այդ կանելիր, կավայ ոննա, և մենք իղուր
ժամանակ չեյինք կորցնի, — ասաց նա թեքլելով դեպի նա
և աշխատելով վրասալ նրա խոռքերը։

— Նա վոչինչ չի իմանում, նա իմ բատրակն և, — ասաց
կինը, աչքերով ցույց տալով Լյու Դենյուանին։

— Անունները, անունները, — զոռաց սպան։

Բայց այլևս վոչ մի խոսք չտվեց։

Կինը լուռ եր։

— Գնդակահարել նրան, — զոռաց դաղաղած յապոնա-
ցին։

Կնոջ բղկտված մարմինը քարշ տվին սենյակից։ Փչում
եր հյուսիսային սուր քամին, բայց նա ցուրտ չեր զգում։
Նրա գլուխն այրվում եր։

Սպան հրաման տվեց, և արյունաթաթախ մարմինն ըն-
կավ ճաքճքած գետնի վրա։

Սպան ծխեց։ Նա լավ տրամադրության մեջ չեր։ Նրան
վո՛չ մի բառ չհաջողվեց կորզել կամակոր կնոջ բերնից։



Արեւ մայր մտավ հեռավոր բլուրների հետեւ։

Ուշ գիշերին յերկու պարտիզան յեկան զնդակահարու-
թյան վայրը։

— Այսուե՞ղ և եւ կամացուկ շշնչաց ուարտիզաններից
մեկը, մի կողմ տալով թիկերը։

Նրա ուղեկիցը, վոր ծերունի յեր, կոացավ զետնին
մոված մարմնի վրա։

— Տյան Յղումին, — վարդաքանքով, վորակս իր սի-
րելի աղջկան, ձայն տվեց նա։

— Տյան Յղումին — կրկնեց նա ավելի բարձր։

— Մեռած և, — անհանգիստ հարցրեց առաջինն։

Ծերունին ավելի կոացավ, ձեռքը որքեց կնոջ մար-
թաթախ կրծքին։ Նա սառն եր, բայց հանկարծ ծերունին
իր մատների տակ զդաց սրտի հաղիվ նկատելի բարախումը։

— Նա կենդանի՞ յեւ ասաց նա։

Պարտիզաններն զղուշությամբ բարձրացրին կնոջ մար-
մինը, խնամքով փաթաթեցին նրան հին շորերի մեջ և
զդուշությամբ իջան արահետով։

Գունատ աստղերն աղոտ լույս եյին տալիս կապույտ
յերկնքում։

Ժամապահն ուշադրությամբ նայեց մառախուղի իսկա
կաթնառպիտակ չերտի մեջ։

Լություն։

Հանկարծ նա ցնցվեց . . . Նրան թվաց, թե զգույշ քայ-
լերի տակ խոխիլի խշոց և լսում։

Ժամապահը լսողությունը լարեց — միայն քամին եր
աղմկում յեղենիների մեջ։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Առաջարանի վորխորեն	5
«Վասկե պարխապը և յեսացող լիճը»	7
Հերոս աղջիկը	10
VIII բանակը ճակատ և դուրս դալիս	11
Գիշերային գրոհ Յամինը ըստ վրա	18
Մինասուզումում	19
Մարտիկ պրաֆեսորը	25
Միջին դուք յերկաթյա յեք	28
Մոր, վորզու և աղջկա մասին	32
Զինական բանվորները հակայապնական ուժերի ավանդաբղն ևն	41
Հայրենասեր յերեխաները	47
Միքանի միջադեպեր	50
«Կարմիր նիզակներ»	52
Ռմբակոծումից հետո	54
Զինական ողաչուները	56
Դասարանի դաշիճում	60
Նվեր	76
Գնդապետ իգորի ծրագիրը	82
Տյան Յղո-Մինը լուս	91

Թալիք. Հ. Մանուկյան
Խմբագիր Ս. Ճակոբյան
Տեխն. խմբ. Ս. Խաչառյան
Սրբագրիչ Հ. Գրիգորյան
Կոնորու որբագրիչ Լ. Վրովյան

Գլավլիտի լիազոր Վ. 1141, հրատ. № 805
Պատվեր № 81, տիբաժ 6000
Թղթի չափսը $72 \times 105^{1/2}$ (66.880 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
6 $1/2$ տպ. մամուլ, 3 $1/4$ թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 2/III 1940 թ.
Ստորագրված ե տպագրելու 11/IV 1940 թ.
Գինը 1 ս.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
առաջան, Յերևան, Ալահիլելյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0189356

ԳԻՒԸ 1 Ր.

ЭМИ СЯО
ГЕРОИЧЕСКИЙ КИТАЙ
Государственное издательство
политической литературы
Ереван 1940

32 (51)
5 - 43